

ՊՐԻԻՔՍԵԼ, 10 (ԱՅՓ).- Մօտաւորապէս հարիւր իրանցի ուսանողներ ցոյց մը կազմակերպեցին երէկ, բողոքելու համար Եւրոպական Միութիւն - Իրան անուտօրի բանակցութիւններու ծրագիրին դէմ: Ուսանողները, որոնք հաւաքուած էին Պրիքսելի մէջ, Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարներու կեդրոնատեղիին դիմաց, պահանջեցին չձեռնարկել բանակցութիւններուն՝ «նոյլաներուն» հետ: Եւրոպական Միութիւնը չ'հնգաբարձ օր պիտի սկսի բանակցութիւններու իսլամական Իրանի հետ:

ՔՐԻՏԱՀԻ ԲՁԻՁԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԻ ԴՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԵ

Հաղորդակցութեան նախարար Ժան Լուի Քըրտահի երէկ անջատ տեսակցութիւններ ունեցաւ «Պրանս Թելեքոմ» եւ «Լիպանսէլ» ընկերութիւններու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումներուն մօտիկ աղբիւրներ յայտնեցին, որ ժողովներուն տիրած է դրական մթնոլորտ: Հաղորդակցուած նաեւ, որ յառաջիկայ օրերուն պիտի կնքուի բնակարանային հեռաձայնի ընկերութիւններուն ստացուածքները պետութեան փոխանցելու համաձայնագիրը:

Հանդիպումներուն ընթացքին տարակարծութիւններ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի եւ հաղորդակցութեան նախարար Ժան Լուի Քըրտահիի միջեւ, կը գտնուի լուծման ճամբու մէջ: Առաջին հերթին, երեսփոխան Իսո զօրակցութիւն յայտնեց այն բոլոր ձեւակաւ պայմաններուն, զորս նախարար Քըրտահի կը պահանջէ: Իր կարգին, երեսփոխան Եւսէպիան Գորակցութիւն յայտնեց այն բոլոր նկատողութիւններուն, որոնք կատարուած են նախարար Քըրտահիի կողմէ, եւ որոնք կը

նպատակադրեն պաշտպանել պետութեան շահերը եւ հանրութեան դրամը: Երեսփոխան Եւսէպիան քննադատեց այն ծրագրուած արշաւը, որուն ձեռնարկած են կառավարութեան յաջողութիւններէն վնասուող կողմեր: «Անոնք ճիշդ կը թափեն հարուածել կառավարութեան միակամութիւնը», աւելցուց ան:

ՆԱԵՒ՝ ՏԱՐԵՍ ՊՈՒԷՅԸ
Երեսփոխան Ֆարէս Պուէյժ երէկ դիտել Շարլ' էջ 2

ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԲՐՏԱՀԻԻ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐՈՒՄ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրիի երեսփոխանական պլոքին անդամ երկու երեսփոխաններ՝ Ուալիտ Իսո եւ Պաւէլ Եւսէպիան երէկ խորհրդարանէն իրենց մեկնումի պահուն յայտարարեցին կեցուածքներ, որոնք բոլոր քաղաքական մեկնարաններու, համարուեցան դրական նախանշաններ, թէ՛ բնակարանային հեռաձայնի ընկերութիւններուն թղթածրա-

ԻՐԱՔԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԹՂԹԱԾՐԱԲԵՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ ԶԵՆՔ ԶԳԵԼՈՎ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ «ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ» ԿԱՏԱՐԵՅ՝ ԽԱԽՏԵԼՈՎ ՄԱԿԻ ԲՈԼՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սպիտակ Տունը երէկ յայտարարեց, որ տակաւին շատ կանուխ է գնահատում մը կատարելու համար Իրաքի ներկայացուցած թղթածրարին մասին, որովհետեւ ամերիկեան գաղտնի սպասարկութեանց պատասխանատուները տակաւին ճոր սկսած ուսումնասիրելու գալն: Սպիտակ Տան բանքեր Արի Ֆլայշըրը ըսաւ, որ թղթածրարին ուսումնասիրութիւնը տակաւին սկզբնական փուլին մէջ կը գտնուի: Ան աւելցուց, որ կարելի չէ արժեւորում մը կատարել, որովհետեւ յստակ չէ, թէ մասնագետները ինչպիսի տեղեկութիւններ պիտի գտնեն թղթածրարին մէջ:

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ

ՐԱՅԱՍՏԱՆ ԴԱՐՁԱԻ ԱՌԵՒՏՈՒՐԻ ՐԱՄԱՇԽԱՐՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ

Հայաստան երէկ անդամակցեցաւ Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութեան: Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութեան (ԱՀԿ) Ժընեւի կեդրոնատեղիին մէջ երէկ սկսաւ կազմակերպութեան գլխաւոր խորհուրդին նիստը, որուն նախագահեց Սերժո Մարչի (Քանադա): Նիստին օրակարգին առաջին կետը կը վերաբերէր կազմակերպութեան Հայաստանի անդամակցութեան: Մարչի անդամ երկիրներուն անունով ողջունեց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի գլխաւորած հայկական պատուիրակութիւնը: Այնուհետեւ Հայաստանի անդամակցութեան գործընթացին աշխատանքային խումբի ներկայացուցիչ դեսպան Սիմէոն Աստրալիան ներկայացուց անդամակցութեան թղթածրարը եւ խումբին աշխատանքներուն արդիւնքը: Ան անդրադարձաւ 1995էն ի վեր գոր-



Ժողովին ընթացքին վարչապետ Մարգարեան՝ ձախից երկրորդը, կը հետեւի քննարկումներուն

Ա. Պ. ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ ընդունեց ԱՊՀ գործադիր կոմիտէի նախագահ Եուրի Եարովը: Հանդիպումին քննարկուեցան ԱՊՀ կառոյցներու աշխատանքներուն վերաբերող հարցեր: Կողմերը յատկապէս անդրադարձան Հայաստանի մէջ նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն: Եուրի Եարով այս առումով յայտնեց, որ ԱՊՀ քարտուղարութիւնը մտադիր է Հայաստանի մէջ նախագահական ընտրութիւններէն մէկ ամիս առաջ յատուկ գրասենեակ մը հաստատել Երեւանի մէջ, ընտրութիւններու նախապատրաստութեան եւ կայացման աշխատանքներուն հետեւելու համար: Շարլ' էջ 2

Եգիպտոս կոչ ուղղած էր Միացեալ Նահանգներուն՝ հապճեպով չդատելու Իրաքի ներկայացուցած թղթածրարը: Արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահերը ըսաւ, որ Իրաքի ներկայացուցած թղթածրարին հարցը քննարկած է Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիտ Ուելչի հետ: Մահեր ամերիկացի դեսպանին յայտնած է, թէ թղթածրարը դատելի առաջ, Ուաշինգթոնը լուրջ ուսումնասիրութիւն մը պէտք է կատարէ: Մահեր շեշտած է նաեւ, թէ իրաքեան ամբողջ հարցը պէտք է լուծուի ՄԱԿի մէջ: Շարլ' էջ 9

ԹՈՒՐԸ ԿԻՊՐԱՅԻՆԵՐԸ Կ'ԱԿԱՆԱՀԱՐԵՆ ՄԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան երէկ կոչ ուղղած է Կիպրոսի յոյն եւ թուրք ղեկավարներուն, որ այս շաբաթ հաւանութիւն տան իրենց կողմէն վերամիացման համար վերատեսութեան ենթարկուած ծրագրի մը անոնց յայտնելով, որ «Կիպրոս պատմութեան հետ ժամադրութիւն ունի»: Սակայն Եւրոպական Միութեան վարչապետ Վեռնիկա Կրասնի ճամբով Վեռնիկա Կրասնի մը գոյացնելու յոյսերը ի դեբե ելած են, երբ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ զատապարտած է նոր ծրագիրը եւ անոր մէկ խորհրդակալը յայտնած է, թէ ան Զորքաբեր Օր (այսօր) թուրքերոյ մէջ հիւանդանոց պիտի մտնէ՝ նոր վիրաբուժութեան մը համար: Մուսթաֆա Սոյուսլու ըսած է, որ 77 տարեկան Տենքթաշ Նիւ Եորք շուրջ երկու ամիս կեցութեանն է ետք Կիպրոս վերա-

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀՐԱՍՍՅԼԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՀՆԱՐ Է ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Պաղեստինեան խորհրդարանի նախագահ Ահմէտ Քորէյ յայտարարեց, որ գործնապէս անկախութի պիտի ըլլայ պաղեստինցիներուն համար կայացնել Յունար 20ի նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները: Քորէյ, որ կը խօսէր Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսիք տը Վիլիէնի հետ տեսակցութեան մը աւարտին, ըսաւ, որ կարելի չէ ընտրութիւններ կայացնել իսրայէլեան հրասայներու շուքին ներքեւ: Քորէյ աւելցուց, որ Տը Վիլիէնի հետ արծարած է նաեւ Իսրայէլի հաստատած շրջափակումէն դուրս գալու կարելիութիւններուն մասին: Քորէյ ըսաւ նաեւ, որ ֆրանսացի բարեկամները փափաք յայտնած են եւ կ'ուզեն օժանդակել քաղաքական միջոցներով իսրայէլեան վերադառնալու գործընթացին: Շարլ' էջ 10

Շ. Յ. Դ. 112ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝

ԸՆԿ. ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆ

(Մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար)

ԸՆԿ. ԴԱԻԹ ԼՈՔԵԱՆ

(Հ. Հ. քաղաքաշինութեան նախարար)

ԸՆԿ. ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

(Հ. Յ. Դ. Բիրոյի անդամ)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 13 Դեկտեմբեր 2002, երկույեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» բառերասրահին մէջ:

ՄԱՍՆԱԿՑԷ՛ ԼԵՄԻ E-MAIL ԱՐՇԱԻՆ

Վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին, Նախիջեանի պատմական Ջուլֆա (Ջուլա) քաղաքի հայկական կոթողները կ'ենթարկուին սիսթեմատիկ բարբարոսություններու եւ քանդումներու՝ ոչնչացնելու համար այդ շրջանին մէջ հայկական պատմական ներկայութեան վկաները:

Այս բոլորին դիմաց, միջազգային պատկան իշխանութիւնները լուր կը մնան: Այս ուղղութեամբ, ԼԵՄԻ Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպած է բողոքի e-mail արշաւ մը, ուղղուած՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր տնօրէն Քուաշիբո Մացուրալայի: Չեր բողոքի ձայնը միջազգային համայնքին լսելի դարձնելու եւ մասնակցելու համար այս e-mail արշաւին, այցելեցէք ԼԵՄԻ կայքէջը՝ www.lemagan.com: Կրնաք նաեւ հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01-243383 կամ 03-802774:

Mr. Koichiro Matsuura
Director General of UNESCO

Dear Sir,

It is with great horror that we are continuously receiving the news of the systematic destructions of Armenian medieval Khatchkars in the historic town of Djulfa in Nakhitchevan.

We cannot accept that the crime against the Armenian cultural heritages continue, while the international community and especially UNESCO remain silent.

As you have successfully prevented the destruction of Armenian monuments in Azerbaïdjan in the near past, we ask you to strongly intervene in order to stop these barbarous acts.

Respectfully Yours,

Ա. Պ. ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ...

Ծարուակուած Ա. Էջէն

Հայաստանի մէջ ԵԱՀԿի ներկայացուցչութեան ղեկավար Ռոյ Ռիվ Երեւանի մէջ յայտարարեց, թէ այսօր Հայաստան պիտի ժամանեն ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց բիրտի խումբ մը փորձագէտներ՝ 19 Փետրուար 2003ին կայանալիք նախագահական ընտրութիւններու նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար: Ռիվ, որ կը խօսէր անցնող տարուան ընթացքին Հայաստանի մէջ ԵԱՀԿի գրասենեակի գործունէութեան մասին տրուած մամուլի ատուիսին ընթացքին, յայտնեց, որ ընտրութիւններու նախօրեակին Եւրոպային Հայաստան պիտի ժամանեն աւելի քան 100 դէտեր:

ԼԻԲԱՆԱՆ - Ե. ՄԻՈՒԹԻՆ
ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԻՆ
ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԸՆԹԱՅԸ ԱՌԱՎ

Լիբանանի եւ Եւրոպական Միութեան միջեւ գործակցութեան համաձայնագիրը երէկ՝ Երեքշաբթի, 10 Դեկտեմբերին, սկսաւ գործնապէս գործադրութեան դրուիլ:

Այս առիթով կառավարութեան Սերալին մէջ, ընթացք առաւ աշխատանքային սեմինար մը, կազմակերպութեամբ տնտեսութեան նախարարութեան Սեմինարին նպատակն է Կորալիզացիոն գործակցութեան իրականացման մէջ կառավարութեան թափած ճիգերուն:

Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին պատկան նախարարութիւններու, սեփական եւ պետական մարմէրու հաստատութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Եւրոպական պետութիւններու դեսպաններ:

Իր խօսքին մէջ, տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պասէմ Ֆլէյխան նշեց, որ սեմինարին ընթացքին պիտի քննարկուին Եւրոպական Միութեան կողմէ տրամադրուած օժանդակութիւնները՝ գործակցութեան համաձայնագիրը գործադրելու համար: Ան ըսաւ, որ Եւրոպական Միութիւնը 2002 - 2004 տարիներուն համար Լիբանանի տրամադրած է 80-միլիոն եւիօ, որուն 45 միլիոնը պիտի գործածուի առեւ-

տուրի մարզին մէջ: Նախարար Ֆլէյխան անհրաժեշտ նկատեց, որ Լիբանանի առեւտրական օրէնքները արդիականացուին եւ հասնին Եւրոպական Միութեան չափանիշներուն, որպէսզի կարելի ըլլայ գործակցութեան համաձայնագիրը ամբողջական կարողանալով իրականացնել:

Խօսք առաւ նաեւ Եւրոպական Միութեան դեսպան Փաթրիք Ռենօ, որ ըսաւ, թէ 12 տարիներու վրայ երկարող գործակցութեան ընթացքին, ճիգ պիտի թափուի դրուած պայմանները ամբողջացնել, որովհետեւ «մենք զմեզ իբրեւ մտել չենք ներկայացնէր, այլ՝ գործակիցներ, որոնց համար դրուած են պայմաններ»:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՅԻ
ՎԱՐԶԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԸՆՏՐՈՒԹԻՆ



Լրագրողներու սենտիքայի ճոր վարչակազմ խորհուրդը

Լրագրողներու սենտիքայի ընդհանուր ժողովը երէկ ընտրեց սենտիքային ճոր վարչակազմ խորհուրդը: Ժողովին ներկայ գտնուեցան տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի եւ ինքագիրներու սենտիքայի նախագահ Մըլիէմ Քարամ:

Յետ քուէարկութեան վարչական խորհուրդի անդամ ընտրուեցան՝ Մոհամէտ Պալպէրի՝ 88 ձայն, Ալ-

տէլ Քարիմ Սալիլ՝ 86 ձայն, Քամիլ Մընասա՝ 85 ձայն, Ռաֆիք Սուրի՝ 85 ձայն, Ժորժ Սքաֆ՝ 82 ձայն, Մանուր Մուպարաբ՝ 82 ձայն, Ալտէլ Ղանի Սալամ՝ 79 ձայն, Ժոզեֆ Թիւրիւմի՝ 73 ձայն, Ժորպան Թուէյնի՝ 71 ձայն, Մալէք Մըրուէ՝ 69 ձայն, Ուալիտ Թիպի՝ 69 ձայն, Ունի Քարաբ՝ 59 ձայն, Իսկ քաղաքական շաբաթաթերթերէն՝ Սիւլան Շըտիտ՝ 85 ձայն, Թալալ Սալման՝ 75 ձայն, Ուալիտ Աուստ՝ 74 ձայն, Ժոզեֆ Պու Աքլ՝ 73 ձայն, Հասան Սապրա՝ 56 ձայն:

Նշենք, որ «Ալգալ» օրաթերթին կողմէ քուէարկութեան մասնակցեցաւ ընկերուի Էվա Տէրվիշեան - Պէրպիւրեան:

ՔԵՐՏԱՀԻ ...

Ծարուակուած Ա. Էջէն

տուաւ, որ հաղորդակցութեան նախարար Ժան Լուի Քըրտահի զբաժանումները՝ բլիթային հեռաձայնի թղթածրարին վերաբերեալ, արմատական փոփոխութիւններ կը մտցնէ՝ ըստ ձեւի եւ բովանդակութեան, նախարարաց խորհուրդին որոշումին մէջ:

Պուէյզ, որ կը խօսէր Պէրբէի մէջ մարտիներու Նասրալլա Պուէրոս Սֆէյր պատրիարքին հետ իր տեսակցութեան աւարտին, անդրադարձաւ նաեւ կառավարութեան փոփոխութեան նկատմամբ իր տեսակցութեան: Ան անհրաժեշտ նկատեց նոր կառավարութեան մը կազմութիւնը սակայն ըսաւ, որ պէտք է խուսափիլ ներկայ կառավարութեան մէկ նմանակը յառաջանելէ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սուրբ Թապազեանի մահուան առիթով, տիկին Սարի Սթեան 20,000 Լ. ռ.՝ ԼՕԻԿ «Աստղիկ» մասնաձեւով:

ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Արագածի շրջան, 20,000 \$: Ընդ. 03-381402:

ՀԵՄ ԸՆԿՐՈՒԹԻՆ
ՇՈՂՈՎՈՐԹԵԱՆՆԵՐԻ
ԳԵՐՉ. Տ. ՍՈՒՐԵՆ Ս. ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ
Հայաստանի Ազգային ժողովի Ը. Յ. Դ. խմբակցութեան նախագահ՝
ԱՂԻՄԱՆ ՎԱՐՂԱՆԵԱՆԻ հետ
Հիմնադրութեան 12 Դեկտեմբեր 2002ի երկրորդ ժամը 8:30ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային տան «Լ. Շանթ» սրահէն ներս:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ
Հայ Դատի Եւրոպայի Յանձնախումբի պատասխանատու
ՀԻՆՏԱ ՉՈՊՈՅԵԱՆԻ
ԵՒ
ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ հետ
Երկուշաբթի, 16 Դեկտեմբեր 2002ի երկրորդ ժամը 8:30ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային տան «Լ. Շանթ» սրահէն ներս:
ՍՈՒՏԵՐ ԱԶՍ

ՀԵՄ ԸՆԿՐՈՒԹԻՆ
Հ. Յ. Դ. ՈՒՂԱՄԵԱԿԻ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՆ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Դեկտեմբեր 2002, երկրորդ ժամը ձիշո 9:00ին, Կրթասիրաց Մշակութային Միութեան «Չ. Գաբրիէլեան» սրահէն ներս, Կիլիաներ - Հալէպ:
ՍՈՒՏԵՐ ԱԶՍ

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ
ՎԱՆԱՅ ԶԱՅՆ
Հարցազրոյց երգչուհի Սեցցո-Սոփրանո
ԼԵՆԱ ՔԻՐՔԵՃԵԱՆԻ հետ
Այսօր՝ Չորեքշաբթի, 11 Դեկտեմբեր 2002, կէսօրու ժամը 12:00ին:

ԱՐԴԵՆ ԻՍԿ ՍԿՍԱԾ Է
«ԱՂԲԱԼԵԱՆ» - Հ. Մ. Բ. Մ.՝ ՄԱՐԶԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻԲԵՆ ՆԵՐՍ
◆AEROBICS ◆STRETCHING ◆TAEOBO
Մանրամասնութիւններու համար անձամբ ներկայացնող համալիրի տնօրէնութեան, առաւօտեան ժամը 10:00էն 1:00 եւ կէսօր ետք ժամը 5:00էն 9:30, կամ հեռաձայնել ընդ ժամերուն 04 722902 3 թիւերուն:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ԱՅՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՆՅԻՆ
ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ
RENT AND SALE
AT HOME
•Wheelchair
•Walker
•Electric Bed
•Manual Bed
•Water Mattress
•Cans
•Sticks
•Serum Tripod
•Walking Frame
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՅԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ
ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԷ, Բ. ՅԱՐԿ
ԸՆԴ. (021) 242553/7
NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.
ԻՂՂԻՂԻ ԷԷԷԷ

PHOTO NERSES
ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆՎԱՐՆԵՐ
Չեր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէ՛ք ճոր հասած ԱՐՈՒԿԱՆ ՕՐԻՄԱԼ մեքենայի միջոցով, որպէսզի եւ զանազան լաբորով:
Ստանձնում՝ 20 վայրկեանէն:
Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպերներու վրայ:
Cameraներու ճոխ հաւաքածոյ:
ալաուներ եւ վկայի շրջանակներու ընտիր տեսակածի:
Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:
Պուրճ Համուտ. Բաղաբապետարանի փողոց.
«Սանթր Արիճ»ի դիմաց. Ընդ. 01-261858 եւ 01-255992

ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ
Կազմակերպութեամբ՝
ՂԱՍԱՆՕՍԱԿԱՆ Ա. ՉԵՆԱՐԿ
Նիւթ.
«3-6 տարեկան երեխաներուն կազմաւորման ընթացքը եւ դժուարութիւնները»
Ղասախօսուի՝ ՎԵՐԱ ՍԻՍԵՆԵԱՆ
Տեղի կ'ունենայ Հիմնադրութեան, 12 Դեկտեմբեր 2002ին, առաւօտեան ժամը 10:00ին վարժարանի սրահին մէջ:
ԸՆԿՐՈՒԹԻՆ

ՍԵՆ ԺՈՂԷՖ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐԵՆԵԼԵԱՆ ԳՐԱՂԱՐԱՆԸ, ՎԱՏԱՊԱՐԱՆԻ
ԵՒ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՆՔՆԵՐԸ
ՃԵԳ ԿԸ ԻՐԱԿԻՐԵԱՆ
ՂԱՍԱՆՕՍՈՒԹԵԱՆ ՍԸ՝
ՓՐՈՅ. ԱՐՄԵՆ-ՔԼՕՏ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ կողմէ
Նիւթ՝
ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆՅԱՍՏԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍԵՆ
ՍԻՆՉԵՒ ՍԻՋԵՐԿՐԱԿԱՆ
•Սահիկներու ցուցադրութիւն
Տեղի պիտի ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 11 Դեկտեմբեր, 2002, երկրորդ ժամը 7:00ին, «Պիպլեթեր Օրիանթալ», ՍԵՆ ԺՈՂԷՖ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ մէջ, Մոնօ փողոց:

ԱՅՆՃԱՐ Ը. Յ. ԴԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ
112ԱՄԵԱԿ
Կը բանախօսէ՝
ԸՆԿ. ԴԱԻԹ ԼՈՔԵԱՆ
Հայաստանի Հանրապետութեան քաղաքաշինութեան նախարար
•Գեղարուեստական յայտագիր
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Դեկտեմբեր 2002, ժամը 8:00ին, «Գալուստ Կիլիպեկեան» սրահին մէջ:
•Ժողովրդային խրախճանք
Երկրորդ ժամը 9:30ին «Նապաա Այնճար» ճաշարանին մէջ:
Յեղափոխական երգերու մեկնաբան
ԳՕԳՕ ԹԻԹԻԹԻՆՃԵԱՆ
Ը. Յ. Դ. «ՎԱՐՍԻՐ ԼԵՆ» ԿՈՍԻՏԵԻ
ՂԱՍԻՒՐԱՎԶԱԿԱՆ ՍԱՐՍԻՆ

ՈՍԿԵՂԱՐ
ԳՐԱՏՈՒՆ
ՈՍԿԵՂԱՐ
★ Ունինք ձեր փնտրած գիրքերը եւ բառարանները:
★ Մանկական գունաւոր գիրքեր, Երգարան եւ Երագահան:
★ Չարագոյնի միահատոր համայնագիտարաններ՝ Անգլերէն եւ Ֆրանսերէն:
Պուրճ Համուտ. Սուրբ Փրկիչ եկեղեցոյ կից.
Ընդ. 01/264750
P.O.Box: 11-8877, Beirut, Lebanon
E-mail: vosketar@yahoo.com

LOU

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԶԵՌԱՅԻՆՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան սեմին տնտեսումի մասին հայ կնոջ ուղղութիւններ տալու եւ այդ առիթով բնակարաններու յարդարման մասին յայտարարելու ցուցմունքներ տալու նպատակով, LOU-ի Շրջանային Վարչութեան դաստիարակչական յանձնախումբին կազմակերպութեամբ, երէկ, LOU-ի «Արաքսի Պուրդուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին «Թնձուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն մը:

Ային Գեորգեանի դասախօսութեան գլխաւոր թեման էր՝ «Տօնական օրերու սեմին ի՞նչպէս դիմագրաւել տնտեսական դժուարութիւնները եւ լաւ տնտեսող կին ու մայր մը ըլլալ»: Ան ըսաւ, թէ երկրին տնտեսական տագնապին հետ ապրելու իմաստով մեծ դեր ունի ընտանիքին մայրը, որովհետեւ ան ընտանիքին հիմն է ու տնտեսագէտը: Ան նշեց, թէ կինը պետք է գիտնայ իր եւ ընտանիքին կարիքները, ճշդէ առաջ նախապէս ինքնին եւ երբեք անոնք չպիշի երկրորդական պէտքերու ու հաճոյքներու համար: Լաւատեղեակ ըլլալով տան եկամուտէն եւ ծախսերէն՝ կինը կրնայ հակակշիռի տակ առնել կացութիւնը եւ ընտանիքը ապրեցնել իր կարելիութեան սահմաններուն մէջ եւ իր կարիքներուն համաձայն:

Ան խօսեցաւ այն քայլերուն մասին, զորս կարելի է կիրարկել եւ օգտագործել դարուն հետ քայլ պահելու, ընտանիքին պէտքերն ու անհամներուն առողջութիւնը ապահովելու, պարզերով եւ նուերներով Նոր Տարի մը ունենալու, ծայրայեղութիւններէ եւ քաղքենիացումէ հեռու մնալու համար:

Չեռնարկին երկրորդ մասով էլ Սելքոնեան ներկայացուց գործնական եւ գեղեցիկ ձեռագիրներ պատրաստելու վանագան ձեւեր: Ան ըսաւ, թէ հիմնականին մէջ պետք է նկատի առնել այն իրողութիւնը, թէ նոր տարուան ուրախութեան մթնոլորտը տան մէջ կենդանացնելու համար պետք է ուրախ գոյներ գործածել եւ անոնցմով ձեռագիրներ պատրաստել: Ան նշեց, թէ տարուան ընթացքին պէտք է հաւաքել եւ պահել այն բոլոր իրերը, որոնք հետագային կարելի է օգտագործել ձեռագիրներու պատրաստութեան համար, ինչպէս կոճղեր, կաթի տուփի կափարիչներ, ծալաւաններ եւ այլն: Ապա ան գործնական ձեւով ներկայացուց մոմակալներ, կաղանդի վարդեր, որոնք կարելի է յարմար գիտով ու դիրքաւ պատրաստել տան մէջ:

Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄՐՅԱՆՔ

Կազմակերպութեամբ Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղականութեան, երէկ տեղի ունեցաւ միջոցառման արտասանական մրցանք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Ազգային Արգարեան, Աքսոր Գասարճեան եւ Թոնչնոց Բոյն վարժարանները, ինչպէս նաեւ Հայ Աւետ. Ծամբեան Թաթիկեան, Կերթմէնեան, Նապարեան եւ Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանները:

Մրցանքին մասնակցեցան վարժարաններու Տրդ եւ ճրդ դասարաններէն աշակերտներ, որոնցմէ իւրաքանչիւրը իբրեւ պարտադիր կտոր սամունքեց Յովհաննէս Թումանեանի «Հայ Ուխտաւորին» բանաստեղծութիւնը եւ հոգեւոր, ազգային կամ հայրենասիրական թեմայով երկրորդ պատ կտոր մը:

Առաջին հանդիսացան Թոնչնոց Բոյնէն՝ Իշխան Տէր Պողոսեան եւ Արգարեան վարժարանէն Նաթալի Պօպալեան. երկրորդ հանդիսացաւ Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանէն՝ Վահէ Սեֆերեան, իսկ երրորդ՝ Թոնչնոց Բոյնէն Անի Հոյրիկեան:

Մրցանքին մասնակցից բոլոր աշակերտներուն բաժնուեցան Ս. Յակոբ Մօքնայ հայրապետին մասին թերթիկներ եւ աղօթքներ, իսկ Յակոբ անունը կրող աշակերտներուն բաժնուեցաւ Սաղմոսագիրք:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ


● ԱՐՏԱԲԻՆ գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ Պուսթրոս պալատին մէջ Եմէնի դեսպան Ալի Ապտալա Պաշայի հետ քննարկեց Եմէնի նախագահ Ալի Ապտալա Սալէիի Լիբանան այցելութեան՝ 19-20 Դեկտեմբերին, կապուած հարցեր:

● ՄԱՐԴԿԱՅԻՆ իրաւունքներու միջազգային օրուան առիթով, երէկ փաստաբաններու Պէյրու-թի սենտիքային կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ խորհրդրդաժողով մը, որուն մասնակցեցան մարդկային իրաւունքներու պաշտպանութեան հարցով մտահոգ երեսփոխաններ, մտաւորականներ, սենտիքայական անձնաւորութիւններ եւ լրագրողներ:

● ՎԱՐՉԱԿԱՆ քարեկարգումներու պետական նախարար Ֆուատ Սատ երէկ լիբանանեան հանրապետութեան ներկայացուցչական կազմակերպութեան պատրաստած մէկ գիրքը, որ կը բովանդակէ 1960-ական թուականներէն մինչեւ այսօր պետական վարչական տարբեր մարմիններու կողմէ պատրաստուած անելի քան 4 հազար ուսումնասիրութիւններ եւ ծրագիրներ:

● ԽՈՐԻՏԻՆԻՍՏԻ փոխ նախագահ Էլի Տերպլի երէկ ըսաւ, որ 24 հոգի փոխադրող վիճեցնու սեփականատէրերը տակաւին չեն ստացած պենսիոնով բանող շարժակներ: Իսկ անոնք, որոնք ստացած են, շարժակները փոստ են: Ան կոչ ուղղեց՝ այս հարցին արագ լուծում մը գտնելու:

● ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ դատախազ Ռիատ Թալիի երէկ ձեռքաւարկեց Եմէնի հրամանագիր հրապարակեց լիբանանահպատակ Ապտալա Մուհթաթիի դէմ, որ անբաստանուած է ահաբեկչական խմբակ կազմելու եւ պետութիւնը տապալելու յանցանքներով: Ապտալա Մուհթաթիի դէմ ձեռքաւարկման հրամանագիրը հրապարակուեցաւ անոր հարցաքննութեանէն ետք:



Տեղական մամուլը իր երէկուան թիւով անդրադարձած է բեռլինի հարցին, նախագահ Լախուտի եւ վարչապետ Հարիրիի յարաբերութիւններուն եւ միջազգային այլ հարցերու:

«Նահար» գրած է, թէ սեփականաշնորհման քայլերու ամերիկեան եւ ֆրանսական աճապարանքին մէջ, բեռլինի ընկերութիւնները համաձայնութիւն կը յայտնեն փոխանցումի պայմանագրութեան: Ըստ «Նահար»-ի, նախկին նախագահ Էլիաս Հըրաուի վօր. Լախուտի հետ ունեցած հանդիպումէն ետք ըսած է, թէ մնալուն կերպով նախագահին կողքին

է: Թերթին համաձայն, Ուաշինկթըն վզուցուցած է Լիբանանի մէջ գտնուող իր քաղաքացիները՝ ամերիկացիներուն դէմ ծաւալած արշաւին պատճառով: «Մուսթաքալալ» գրած է, թէ դրամատնային մարզը պետական գանձին համար կը խնայէ տարեկան 1100 միլիոն տոլար: «Քիֆահ Արապի»-ի համաձայն, վարչապետ Հարիրի վօրակցութիւն կը յայտնէ նախարար Քըրտաիի նշումներուն եւ ընկերութիւնները կը մղէ համաձայնագիրը ընդունելու: Ըստ թերթին, Ժումպալ կը քննադատէ լաւատեսութեան մթնոլորտը: Թերթը նաեւ նշած է, թէ լիբանանեան դրամատնութիւնը Երեքշաբթի օր կ'որոշեն 12 միլիար տոլարի փոխաւորութիւն կատարել:

«Սաֆիր» նշած է, թէ Կեդրոնական դրամատնութիւնը կը մասնակցի պարտքերու նուազումին: Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խաւարպի ըսած է, թէ Հրպայալլայի եւ «Քալիտա»-ի միջեւ ոչ մէկ կապ կը տեսնէ: «Լիուա» նշած է, թէ բեռլինի բարեփոխուած պայմանագրութիւնը կը ստորագրուի 2 օրուան ընթացքին, իսկ Միացեալ Նահանգներ կը շնորհաւորեն «Փարիզ - 2»-ի յաջողութիւնը: «Քիֆահ Արապի» գրած է, թէ Թէլ Աւի 12 միլիար տոլարի օժանդակութիւն կը պահանջէ Միացեալ Նահանգներէն: «Մուսթաքալալ» նշած է, թէ Իրանի մէջ իրաքցի ընդդիմադիր ղեկավար մը շատ մօտանած է ահաբեկչական խմբակ կազմելու եւ պետութիւնը տապալելու յանցանքներով: «Մուսթաքալալ» գրած է, թէ գոլութիւն ունի բանակցութիւնները սկսելու պաղեստինեան նախաձեռնութիւն մը: Իսրայէլ Արաֆատի կ'արգիլէ Բեքրեհէմի մէջ ծննդեան աղօթքին ներկայ ըլլալէ:

Panasonic advertisement featuring various electronics like DVD players, televisions, and cameras with prices and 'FREE' offers.

Մ. Ա. Հ. Ա. Ե. ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՅՆՃԱՐ ՆԱԲԱԿԱՏԻՔ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃԸ

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՀԱՍՏ. - MAISON GABY Տնային Ելեկտրական Առարկաներ - Home Appliances

ԱՆԻ ՔԵՐՈՒԲԵԱՆԻ ԴԱՇՆԱԿԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ ԿՈՆԴԱԿԸ «ՆԱՐԵԿ»Ի 1000ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Սրբ. Գրիգոր Նարեկացիի «Մատեն և Ողբերգություններ» կոթողային գործին 1000ամեակն է 2003 տարին: Այս առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս կոնդակով մը՝ խոր քննարկման ճամբով անդրադարձավ «Նարեկ»ին խորիմաստ բովանդակության Կրկնական Ս. Աթոռի թեմակալ առաջնորդներուն թելադրելով նշեալ մեծանուն Սուրբի հանճարեղ գործին 1000ամեակը:

Ստորև կ'ունդակը: 2003 տարին Սուրբ Գրիգոր Նարեկացիի «Մատեն և Ողբերգություններ» 1000ամեակն է: Կայարդեօք հայ մը այս երկրագունդին վրայ, որ լսած չըլլայ մեր ժողովուրդին «Նարեկ» անունով ծանօթ այս սրբազան մատենին մասին՝ հայ եկեղեցւոյ, հայ դպրոցին կամ հայ մշակոյթին ճամբով: Հայոց վասպուրակային շաշարհին Ռշտուցեաց գաւառի այս մեծ կանաչուրդին կողմէ գրի առնուած այս աղօթագիրքը մեր ժողովուրդին համար դարձավ «երկրորդ Աստուածաշունչ»:

Արդարեւ, մտքի հանճար մըն է 951ին ծնած Նարեկացիին՝ իր ինքնուրոյն մտածելակերպով, աստուածաբանական խորաբափանց վերլուծումներով, գրական անսովոր պատկերներով ու փիլիսոփայական երկնասլաց թռիչքներով: Իսկ Մարգարէներու հրեղէն լեզուով եւ Սաղմոսներու քնարական շունչով գրուած «Նարեկ»ը, մարդկային անաւոր մեղքին ու աստուածային մեծ սիրոյ այս սրբազան մատենը, իւրաքանչիւր տեղ մը կը գրաւէ ոչ միայն հայ եկեղեցւոյ հոգեւոր գրականութեան անդամներէն ներս այլ նաեւ համաքրիստոնէական աստուածաբանական գրականութեան ու ընդհանրապէս հոգեւոր մշակոյթէն ներս:

«Նարեկ»ը կ'ենդանի պատկերն է Աստուծոյ հետեցած մարդուն ողբերգութեան: Ան, հաւատարմ ու երկնայինին տեսլիքով զսպանկուած մարդուն հոգիին ու մտքին հիզմէ՝ խնկումի, աղօթքի ու պաշտարարութեան ճամբով մօտենալու Անհասանելիին: «Նարեկ»ի իւրաքանչիւր տողը, իւրաքանչիւր բառն իսկ մարդու մեղապարտ հոգիին լացն է եւ աղաչանքը՝ «ընկալ քաղցրութեամբ, տէր Աստուած հօգօր, գողանացողիս գաղաչանք»: «Նարեկ»ը նաւաբեկեալ մարդուն փնտրուրքն է «բարի նաւապետին»:

«Նարեկ»ով հայ եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութիւնը նոր հունաւորում ու տարածք կը ստանայ: Ան ոչ միայն սոսկ Աստուծոյ մասին խօսք կ'ըլլայ, այլ նաեւ՝ «խօսք ընդ Աստուծոյ»: Աստուածաբանութիւնը կը դառնայ երկխօսութիւն մարդուն եւ Աստուծոյ միջեւ:

«Նարեկ»ով աստուածաշնչական հոգեւոր ու բարոյական արժեքները ու հաւատքի նշմարտութիւնները կը դադրին տեսական յղացքներ ու դաւանաբանական բանաձեւեր ըլլալէ, եւ մարդու կեանքին մէջ կը ստանան գոյութեան խորք:

«Նարեկ»ով հայ կեանքի ու հոգեմտաւոր արժեքներու ճամբով արտայայտուող քրիստոնէական հաւատքը կը ստանայ համաքրիստոնէական ինքնութիւն եւ համամարդկային նկարագիր: Վերջապէս, «Նարեկ»ով Աստուած դարձեալ երկինքէն երկիր կ'իջնէ ու կը մօտենայ մեղաւորին, աղքատին, գրկեալին:

Նարեկայ վանքի այս սրբակեցաւոր վանականին հոգիին նենքերումներով ու հաւատքին կրակով գրուած այս սրբամատենը աղօթական երկխօսութիւն մըն է անկատարին ու կատարեալին, մեղաւորին ու Անմեղին, ժամանակաւորին ու Յաւիտեանականին, մեղապարտ որդիին ու երկնաւոր Հօր միջեւ: «Նարեկ»ը յուշարար մըն է ու միաժամանակ հրաւեր մը ուղղուած իւրաքանչիւր հայուն՝ ապելու Բեթղեհեմի ճամբով աշխարհին յայտնուած ու Աստուծոյ Որդւոյն արիւնով գնուած ճշմարիտ կեանքը, յարիտեանակն կեանքը:

Այսպէս եղաւ «Նարեկ»ը մեր ժողովուրդին համար: Մեղքերու ծովուն մէջ ընկղմած հայուն համար ան դարձաւ դէպի Աստուած առջնորդող փրկութեան լստ: Խաւարին մէջ կորսուած հայուն համար ան դարձաւ լոյսի ու յոյսի փարոս: Մեր ժողովուրդը ոչ միայն «Նարեկ» կարդաց ու «Նարեկ»ը դարձուց իր բարձին գիրքը, այլ նաեւ նոյնացաւ «Նարեկ»ին հետ անոր մէջ տեսնելով տառապանքէն դէպի յաղորթիւն, մահէն դէպի կեանք ընթացող իր պատմութեան լուսեղէն ճամբան:

2003 տարին հռչակելով Ս. Գրիգոր Նարեկացիի «ՄԱՏԵՆ ԵՎ ՈՂԲԵՐԳՈՒՆՆԵՐ ԱՆ» 1000ԱՄԵԱԿԻ ՏԱՐԻ, կը թելադրենք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան քննակալ առաջնորդներուն ու Ազգային Իշխանութեանց, ինչպէս նաեւ մեր գաղութներու կեանքին մէջ գործող մշակութային ու կրթական բոլոր կազմակերպութիւններուն ու կառոյցներուն հոգեւոր, մշակութային, գրական ու կրթական ձեռնարկներու ու ծրագրերներու ճամբով լուսարձակի տակ բերելու «Նարեկ»ի եզակի արժեքը մեր ժողովուրդի ու եկեղեցւոյ կեանքէն ներս:

«Նարեկ»ի 1000ամեակը նշել կը նշանակէ «Նարեկ»եան հաւատքով ու տեսլիքով հարստացնել մեր անհատական թէ հաւաքական կեանքը: «Նարեկ»ի 1000ամեակը տօնել կը նշանակէ «Նարեկ»ի էջերէն ժայթքող լոյսով ու յոյսով պայծառակերպել մեր կեանքը: Այս մօտեցումով ու նախաձեռնողութեամբ պէտք է արժեւորել հայուն եւ ամբողջ մարդկութեան անունով դարբեր շարունակ «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» դարձած այս սրբազան մատենին 1000ամեակը:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւետ օրհնեալ ի մէնջ. Ամէն:

Մեծ մասամբ օտար երաժշտասէր ստուար հանդիսականներու ժամադրավայրը այս անգամ գերմանական «Քիւլթուրլիք Ենթրոմ» Մշակութային կեդրոնի դահլիճն էր, Չորեքշաբթի, 27 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:00ին, ուր լիբանանահայ անուան դաշնակահար, երաժշտահան եւ մանկավարժ Պօղոս Ճելալեան ներկայացուց իր խոստմնալից ուսանողուհին՝ Անի Քերոբեան:



Երաժշտական երեկոյին բացումը կատարելով՝ Պօղոս Ճելալեան զեւուցուց մը ներկայացուց յայտագրի ճեղքներն ու մատուցուելիք ստեղծագործութիւնները, յատկապէս երիտասարդ ունկնդիրներուն համար ուսանելի ձեւ մը՝ համերգին առաւել հեզասահ ու «գիտակից» ունկնդրութեան մը համար: Այնուհետեւ Անի Քերոբեանի ունկնդրութիւնը սկսաւ Տոմինիթօ Աքարյանի երկու Սոնատներով (Թիւ 22 եւ 349): Ապա ան յաջորդաբար կատարեց նաեւ Պեթհոօվէնի 14րդ՝ «Լուսնի Սոնատ»ը եւ Պաֆ-Պաֆ-Պաֆի «Չարուն»ը:

Ունկնդրութեան երկրորդ րաժինով Անի Քերոբեան կատարեց Շոփէնի առաջին «Պալատ»ը, իր ուսուցիչին՝ Պօղոս Ճելալեանի «Նազ պար»ն ու դաշնակի Սոնատը եւ աւարտին՝ Չորեքշաբթի նի «Ռապսոտի ին պլու»ն: Դաշնակի գրականութեան հանրածանօթ եւ բարդ ստեղծագործութիւններուն մէջ Ուրախալի է մատնանշել Պօղոս Ճելալեանի քնքուշ «Նազ պար»ին ու Սոնատին առկայութիւնը յայտագրի մէջ: Մեղեդային ու քնարաշունչ «Նազ պար»ը բնութան արճարեւութեան համարձակութեամբ ձեւաւորուած է, որ արժանի է իր երաժշտական ուսման մէջ: Նախակրթութիւնը ստացած է տիկին Ռուբինա Արթուրեանի մօտ, որ մէ ետք շարունակած է Պօղոս Ճելալեանի հսկողութեամբ: Ան վկայուած է Ֆրանսայի Պուլոնը Պիլանդուր երաժշտանոցէն: Երկրներն ունեցած է Տուպայի եւ Պէյրութի Ամբերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»ին մէջ: Ան իբրեւ երգչուհի մաս կը կազմէ նաեւ «Արթուր» երգչախումբին, իբրեւ մենեջերուհի:

Շնորհաւորելի է նաեւ վարպետը՝ Պօղոս Ճելալեան, որ յանձինս Անի Քերոբեանի խոստմնալից դաշնակահար մը եւս պարզեւած է մեզի: Զ. Ք.

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԲԱՄԲԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Սփիւրքահայ երիտասարդ մը կ'այցելէ Հայաստան: Երեւանի մէկ ճաշարանը կ'երթայ ճաշելու: Սեղանին վրայ դրուած ճաշացուցակը աչքէ կ'անցնէ ու կը տեսնէ աղանդներ բար: Երիտասարդը կ'անդրադառնայ տպագրական սխալին, թէ պէտք էր գրուած ըլլար աղանդներ եւ կ'ուզէ կատակով հասկնել ծառայող օրիորդին եւ մատնանշել սխալը նուրբ կատակով մը ու կը հարցնէ:

- ՄՈՐՄՈՆ ՈՒՆԻՔ: (Մորմունք աղանդ մըն է):
Օրիորդը առանց հասկնալու կատակին բնոյթը եւ բառին իմաստը կը պատասխանէ ամենայն լրջութեամբ.
- Ո՛չ, չունենք...
Տպագրական սխալները յանգի մեզ կը մղեն կատակելու: Բայց կէս կատակ, կէս շիտակ արտայայտուած խօսքերէն ալ դասեր քաղելը ուսանելի կընայ ըլլալ: Հայաստանցի հայրենի տեղեակ էր մորմունք աղանդին Հայաստանի մէջ գոյութիւն ունենալէն...

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ԹԵՍԱԳՈՒՆԻԿԷԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 99ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Կիրակի, 24 Նոյեմբերին, Թեսաղոնիկէի մէջ տեղի ունեցաւ տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան 99ամեակի նշումը:
Այս առիթով, Ծարաթ, 23 Նոյեմբերին, Թեսաղոնիկէի «Տէր Զաքարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Տիկնանց Մարմինին կողմէ պատրաստուած աւանդական ընթրիքը:

Բացման խօսքը կատարեց Տիկնանց Մարմինի ատենադիր Եւթիմիոս Ծահապեան, որ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ անդրադարձաւ եկեղեցւոյ դերակատարութեան՝ գաղութի կեանքի վերելքին մէջ: Ապա, հրաւիրեց Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Սահակ արք. Այվազեանը՝ փոխանցելու համար իր պատգամը:

Սրբազանը իր ուրախութիւնն ու քաջալերանքը յայտնեց ժողովուրդին, որ միշտ բոլորուած կը մնայ եկեղեցւոյ շուրջ եւ ազգային կեանքը վառ կը պահէ բոլոր մարզերու մէջ: Ան ըսաւ. «Աւելի քան 40 տարւած ծառայութեանս պատասխան վրայ ինչ-ինչ աշխատանքներ եւ իշխատակներ կու գան այս վայրկեանին, գոր կատարեցին բոլոր միասին»: Առաջնորդ սրբազանը թելադրեց անհատական կերպով շարունակել յառաջ տանիլ աշխատանքները, ապա ներկայ երիտասարդութեան կողմէ կատարուած ճանապարհորդութեան մասին լեզուելու եւ հայու ոգիին:

Կիրակի, 24 Նոյեմբերին, Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան 99ամեակին առիթով տեղի ունեցաւ Ս. պատարագ: Օրուան պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Սահակ արք. Այվազեան:

Պատարագի աւարտին կատարուեցաւ պաշտօնական հոգեհանգիստ եկեղեցւոյ ազգային բարերարներուն եւ բոլոր սպասարկողներուն յիշատակին, այնուհետեւ օրհնուեցաւ մատաղը, որ բաշխուեցաւ ժողովուրդին:

Հոգեհանգստեան արարողութեան եւ մատաղօրհնէքէն ետք կարդացուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին օրհնութեան գիրքը, որոնց մով պարզեւատրուեցան Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կեանքին մէջ իրենց նպաստը բերած 6 ազգայիններ: Սահակ արք. Այվազեանի կողմէ Արամ Ա. կաթողիկոսի օրհնութեան գիրքը տուելու թեմը պաշտօնապէս յայտարարուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ 100ամեակի հանդիսութեանց բացումը: Այս առիթով, յառաջիկայ ամբողջ տարուան տեւողութեան տեղի պիտի ունենան ձեռնարկներ:

White-Westinghouse®
Մայքրոուէյվ Մայքրո գիներով
DIGITAL CONTROL 30 litres \$109 + VAT
DIGITAL CONTROL 28 litres (with grill) \$109 + VAT
DIGITAL CONTROL 28 litres \$99 + VAT
ROTARY CONTROL 28 litres \$89 + VAT
DIGITAL CONTROL 23 litres \$79 + VAT
Վճարումը՝ կանխիկ
ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ. Պորժ Հանուտ - Քաղաքապետ. հրապարակ ՅԵՌԱԶԱՅՆ՝ 01-241000
2րդ մուտք, Սանքըր Պլանքոյն: Կառուուող ապահովում:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՅԷ
ՀՅՎ. ԱՆՍԻՔ
2003ԳՅԱՍԻ ՕՐԲՈՒՆՅՈՒ
ՍՍԿ՝ 10.000 Լ.Ո.
Պատարագի արարողութեան արարողութեան եւ մատաղօրհնէքէն ետք կարդացուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին օրհնութեան գիրքը, որոնց մով պարզեւատրուեցան Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կեանքին մէջ իրենց նպաստը բերած 6 ազգայիններ: Սահակ արք. Այվազեանի կողմէ Արամ Ա. կաթողիկոսի օրհնութեան գիրքը տուելու թեմը պաշտօնապէս յայտարարուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ 100ամեակի հանդիսութեանց բացումը: Այս առիթով, յառաջիկայ ամբողջ տարուան տեւողութեան տեղի պիտի ունենան ձեռնարկներ:

Միջազգային Քաղաքական Կեանք

ՅԻՇԵՑԷՔ ՄԻՆԻՍԸ

Չսխալիք, հոս գործ չունիք 1972ի Միւնիխի հետ, որ իսրայէլեան եւ պաղեստինեան արիւնալի բախումներու մէկ դրուագին բառերաբեմ դարձած էր: «Մեր» Միւնիխը անկէ առաջուան է, 1938ի՝ Միւնիխը:

Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբը եւրոպական Միութեան ուղղուած իր կոչին մէջ կը գոչուցնէ, որ Թուրքիոյ անդամակցութեան առջեւ դուր բաճալու պարագային, եւրոպա կրկնած կ'ըլլայ 1938ի Միւնիխի սխալը:

Այդ թուականին եւրոպա սմբած-կրոտած վիճակ մը կը պարզէր ցացիական Գերմանիոյ գինուորական սպառնալիքին դիմաց: Մեծն Բրիտանիոյ այդ օրերու վարչապետ Նեւիլ Չեմպլըրէյն, հետեւելով ողորումի եւ բժնանքի վարքագիծին, դաշինք մը կնքեց Հիթլերի հետ եւ Լոնտոն վերադարձին այդ թուրք ձեռքեր բռնած յայտարարեց. «Ձեզի խղաղութիւնը պիտի չընդհատուի, եւս ինչպէս որ Թուրքիոյ դիմաց չ'ընդհատուի»:

Այս էր Չեմպլըրէյնի ողորումի եւ բժնանքի քաղաքականութեան բերած խղաղութիւնը:

Հիմա Թուրքիա եւ իր հզօր դաշնակիցը Ամերիկա, կը փորձեն Չեմպլըրէյնի կացութեան մատնել եւրոպական Միութիւնը, որպէսզի իր շարքերէն ներս ընդունի ցեղասպանութիւն գործադրած (եւ այժմ գայն ուրացող), փոքրամասնութիւնները շնչասպառ ըրած, Կիպրոսի հիւսիսային բաժինը քառորդ դարէ ի վեր բռնագրաւած, հազարաւոր քրտական գիւղեր իրենց բնակիչներով հանդերձ քարտէսէն սրբած Թուրքիան:

Իմաստուն մարդ էր Պարոնեան: Պատմութեան մասին իր լակոնական բացատրութիւնը հետեւեալն էր. «Ետեւղ ցալոր, որ առջեւդ տեսնես»: Եւրոպացիք արդեօք մոռցա՞ծ են իրենց սեփական պատմութեան ճոյնիսկ վերջին յիսուն տարիները, մոռցա՞ծ են, թէ բռնատէրը, ոճրագործը կամ դահիճը ամէն գնով գոհացընելու եւ ողորելու քաղաքականութիւնը պիտի չ'ազդի այն ձախողութեան, որուն գոհ գեաց Չեմպլըրէյնի քաղաքական ասպարէզին հետ քաղաքակիրթ աշխարհը ամբողջ:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ԵՐՈՊԱՅԻ ԸՆԶ ԴՍԻ ԶԱՆՁԱԽՈՒՄ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ՊԵՏՔ ԶԷ ՏԵՂԻ ՏԱԼ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԺՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ

Եւրոպական Միութեան Բոֆենհակընի գերատեսչանի նախորեակին, Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբը յայտարարութիւն մը հրատարակեց, եւրոպական երկիրներու ղեկավարներուն կողմէ զեղբոր, որ տեղի չտան Թուրքիոյ ճնշումներուն եւ անոր անդամակցութեան գծով բանակցութեանց թուական չձեռնարկ:

Կոչը, որ եւրոպական հիմնական կազմակերպութիւններուն փոխանցուեցաւ ստորագրուելու համար, կը յիշեցնէ, թէ Թուրքիա է ու կը մնայ ցեղասպան եւ միաժամանակ ուրացող պետութիւն մը, որ միաժամանակ կը վարէ յարձակողապաշտ վարքագիծ ու շրջանային անկայունութեան ազդակ է:

Կը նշուի նաեւ, որ ներկայ թրքական հանրապետութիւնը իւրացուցած է ջարդուած կամ տեղահանուած հայերու ինչքերը, թրքացուցած է հայկական պատմական յուշարձանները, ինչպէս նաեւ խորհրդային վարքագիծ կը մշակէ փոքրամասնութիւններուն նկատմամբ: Կոչը նաեւ կը հաստատէ, թէ Թուրքիա կ'որոշանայ Հայկական Յեղափոխութիւնը եւ սպառնական կեցողութիւն ունի Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ եւ շրջափակումի ենթարկած է գայն: Յանձնախումբի ատենապետ Հիլտա Չոպոյեան այս առիթով յայտարարեց, թէ «Եւրոպական Միութեան կ'անկախութիւնը, որ պայման դնէ Թուրքիոյ անդամակցութեան» հայութեան նկատմամբ անոր վարած քաղաքականութեան գծով՝ դադարեցնել իր հոգումասերուն մէջ բնակող հայերուն նկատմամբ ճնշամիջոցները, դադարեցնել իր թշնամական վարքագիծը Հայաստանի նկատմամբ եւ վերջ տայ իր բացայայտութիւնը ուրացման քաղաքականութեան: Չոպոյեան շարունակեց ըստով, որ «Եւրոպայի կառուցելու բնորոշ հիմնուած է երէկի թշնամիներուն միջեւ խղաղութեան գաղափարին վրայ, ուր Գերմանիա դատապարտած է իր նացիական անցեալը եւ ծախքի ազդանամով՝ գաղափարաբանութիւնը: Այժմ, Թուրքիա կ'ուզէ եւրոպայի միանալ՝ առանց հրաժարելու գերակայ ազգ ըլլալու իր միտումէն եւ առանց ներդրութիւն խնդրելու հայերէն» Յեղափոխութեան հարցով»:

Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի կոչը, որուն շուտով պիտի միանան նաեւ եւրոպական բազմաթիւ կազմակերպութիւններ, կը հաստատէ, թէ Թուրքիոյ հակահայ քաղաքականութեան հրաժարելն է միայն, որ կրնայ վկայութիւնը հանդիսանալ, որ ան իրապէս ժողովրդավար երկիր է՝ զեծը որեւէ խտրականութիւնէ: Կոչը կ'եզրափակէ ըստով, որ Եւրոպական Միութեան ղեկավարները պատմութեան առջեւ պատասխանատու են եւ անոնցմէ կը պահանջէ չկրկնել 1938ին Միւնիխի մէջ կատարուած սխալը:

Վաղը՝ Հինգշաբթի, 12 Դեկտեմբեր 2002, Դանիոյ մայրաքաղաք Բոֆենհակընի մէջ, Եւրոպական Միութեան վեհաժողովը պիտի ըլլայ պատմական, որովհետեւ Եւրոպայի քարտէսը վերջնականապէս փոփոխութեան պիտի ենթարկուի՝ պլոքին ճոր անդամակցութիւններու լոյսին տակ. արեւելեան եւրոպական երկիրներ համաձայնութիւններ ձեռք պիտի ձգեն այս գծով, իսկ Կիպրոսի բաժանումին սկզբունքային համաձայնութիւն մը գոյանալու պարագային՝ Թուրքիոյ առժամայն թուական մը կրնայ տրուիլ՝ անդամակցութեան բանակցութեանց սկսելու նպատակով, ինչ որ սակայն շատ հաւանական չի թուիր ըլլալ, որովհետեւ Թուրքիոյ անդամակցութեան հարցով Եւրոպայի տարածքին մեծ ընդդիմութիւն յառաջացած է, հակառակ Ուաշինգթոնի տրամադրած փորձերուն:

ԵՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑԸ

Եւրոպական Միութիւնը կազմուած է Բ. Աշխարհամարտէն ետք, երբ 9 Մայիս 1950ին Ֆրանսա պաշտօնապէս առաջարկեց եւրոպական դաշնակցութիւն մը հիմնել: Առաջին հերթին, վեց երկիրներ՝ Պելճիքա, Գերմանիա, Ֆրանսա, Իտալիա, Հիւքսամպուրի եւ Հոլանտա անդամակցեցան Եւրոպական Համայնքին: Ապա, անոր միացան 1973ին՝ Դանիա, Իրլանտա եւ Անզլիա, 1981ին՝ Յունաստան, 1986ին՝ Սպանիա եւ Փորթուգալ, իսկ 1995ին՝ Աւստրիա, Ֆինլանտա եւ Շուեյտ: Այժմ Եւրոպական Միութիւնը կը բաղկանայ 15 անդամ երկիրներէ:

Եւրոպական Միութիւնը օրէնքի եւ ժողովրդավարութեան սկզբունքներուն վրայ հիմնուած է: Անկախ նոր պետութիւն մը չէ, այլ կը ներկայացնէ Եւրոպայի միացեալ շահերը: Միութեան հիմնական նպատակներն են.

- 1) Եւրոպական քաղաքացիութիւն հաստատել (մարդկային հիմնական իրաւունքներ, ինչպէս նաեւ քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքներ):
- 2) Ապստուծութիւն, ապահովութիւն եւ արդարութիւն ապահովել:
- 3) Տնտեսական եւ ընկերային զարգացումներու համար աշխատանք տանիլ (միացեալ շուկայ, միացեալ վաճառանիշ, գործի առիթներ, շրջանային զարգացում, կենսոլորտի պաշտպանութիւն):
- 4) Աշխարհին մէջ Եւրոպայի դերը հաստատել: Եւրոպական Միութիւնը կը բաղկանայ հետեւեալ 5 կառույցներէն.

1.- Եւրոպական խորհրդարանը, որ կ'ընտրուի իւրաքանչիւր հինգ տարին անգամ մը: Խորհրդարանը իրաւունք ունի օրէնքներ եւ բանաձեւեր որդեգրելու, Եւրոպական Յանձնաժողովի աշխատանքներուն հսկելու եւ յանձնաժողովի անդամներուն թեկնածութիւնը վաւերացնելու: Խորհրդարանը նաեւ կը բաղկացուի Միութեան ընդհանուր պիւտճէին վրայ:

2.- Եւրոպական խորհուրդը, որ Միութեան որոշումները տուող հիմնական կառույցն է: Խորհուրդը Միութեան օրէնսդրական մարմինն է: Անկա կը համադրէ անդամ երկիրներուն տնտեսական ռազմավարութիւնը եւ խորհրդարանին հետ կը հսկէ Միութեան պիւտճէն: Խորհուրդը կու տայ այն հիմնական որոշումները, որոնք կը ձեւաւորեն Միութեան արտաքին եւ ապահովութեան քաղաքականութիւնը: Միութեան անդամ երկիրներուն միջեւ յարաբերու-



Եւրոպական Խորհրդարանը՝ Սթրասպուրկի մէջ

թիւններուն համակարգումը եւս Եւրոպական պարտականութիւնն է: 3.- Եւրոպական Յանձնաժողովը, որ Միութեան գործադիր մարմինն է: Յանձնաժողովին անդամներն ու նախագահը կը նշանակուին անդամ երկիրներուն կողմէ՝ Խորհրդարանին հաւանութիւնը ստանալէ ետք: Իրրեւ գործադիր մարմին, յանձնաժողովին պարտականութիւնն է հսկել Խորհրդարանին եւ Եւրոպական խորհուրդին կողմէ որդեգրուած օրէնքները գործադրելու մին: Միջազգային գեոմի վրայ յանձնաժողովը կը ներկայացնէ Եւրոպական Միութիւնը եւ կը մասնակցի միջազգային համաձայնագիրներուն: 4.- Արդարութեան ատենան, որ կը հսկէ Միութեան մէջ օրէնքներու գործադրութեան: 5.- Հաշուեքննիչ ատենան, որուն պարտականութիւնն է քննել Միութեան մուտքը, ելքը եւ պիւտճէն:

Եւրոպական Միութիւնը կ'ընդգրկէ 5 այլ կառույցներ, որոնք ունին նուազ կարեւոր պարտականութիւններ: 1.- Եւրոպայի տնտեսական եւ ընկերային յանձնաժողովը, որ Միութեան տնտեսական եւ ընկերային ռազմավարութեան մասին խորհուրդներ կու տայ վերոյիշեալ մարմիններուն: 2.- Շրջանային յանձնաժողովը, որուն անդամները բաղկացած կ'ըլլան տեղական եւ շրջանային իշխանութիւններու ներկայացուցիչներն են: Յանձնաժողովը առաջարկներ կը կատարէ շրջանային ռազմավարութեան, կենսոլորտի եւ Միութեան մասին:

3.- Եւրոպական Յանձնապատրաստ, որուն կրնան դիմել Միութեան մէջ բնակող բոլոր անհատներն ու հաստատութիւնները: 4.- Եւրոպական Յանձնաժողովը, որ Միութեան պատկանող կառույցն է: 5.- Եւրոպական կեդրոնական դրամական Դրամատուրը, որ Միութեան տնտեսական կառույցն է: Անի-կա կը Ֆինանսաւորէ Միութեան ծրագրերը: 6.- Եւրոպական կեդրոնական Դրամատուրը, որ կը հսկէ տնտեսական փոխանակումներու ընթացքին:

Եւրոպական Ներդրումներու Դրամատուրը, որ Միութեան տնտեսական կառույցն է: Անի-կա կը Ֆինանսաւորէ Միութեան ծրագրերը: 7.- Եւրոպական կեդրոնական Դրամատուրը, որ կը հսկէ տնտեսական փոխանակումներու ընթացքին:

Իր այս բազմաթիւ կառույցներով, Եւրոպական Միութիւնը կը ներկայացնէ մարդկային եւրոպայի շահերը: Իւրաքանչիւր անդամ երկիր Եւրոպական խորհուրդին մէջ իր ներկայացուցիչներով կ'ընտրուի Միութեան միջոցով: Եւրոպական Միութեան միջոցով կ'ընտրուի Միութեան ընդհանուր պիւտճէնը: Անկախ վերոյիշեալ կառույցներէն, Միութիւնը ունի 13 այլ մարմիններ, որոնք հիմնականօրէն կը ստանան գիտական եւ արհեստագիտական պարտականութիւններ: Եւրոպական Միութեան անդամ 15 երկիրներն են՝ Պելճիքա, Դանիա, Գերմանիա, Յունաստան, Սպանիա, Ֆրանսա, Իրլանտա, Իտալիա, Հիւքսամպուրի, Հոլանտա, Աւստրիա, Փորթուգալ, Ֆինլանտա, Շուեյտ եւ Անզլիա: Միութեան անդամակցութեան թեկնածու երկիրներն են՝ Պուրկարիա, Չեխիա, Էսթոնիա, Կիպրոս, Լատվիա, Լիթվանիա, Հունգարիա, Մալթա, Լեհաստան, Ռուսիա, Սլովենիա, Սլովակիա, Թուրքիա:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ

Տասը տարիէ ի վեր Միացեալ Նահանգներ կը կիրարկեն մեղմ, բայց շարունակական ճնշում մը եւրոպական կառավարութիւններուն վրայ՝ Թուրքիան Եւրոպական Միութեան մէջ ընդունելու համար: Այս հարցին մէջ շատ յստակ կ'երեւի Միացեալ Նահանգներու շահը: Այս կեցուածքով Միացեալ Նահանգներ կը ջանան վարձատրել դաշնակից մը, որ օր մըն ալ չէր գերեց 1945էն ի վեր՝ համայնակարութեան դէմ մղուած Պաղ պատերազմին ընթացքին, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի մէջ իրենց որդեգրած նոր ռազմավարութեան մէջ: Անոնք կը փորձեն եւրոպացիներուն վճարել տալ այս վարձատրութեան գինը:

Միացեալ Նահանգներ կ'ուզեն, որ եւրոպացիները ամբողջութեամբ բանան իրենց սահմանները թուրք աշխատաւորներուն եւ ընտանիքներուն առջեւ, մինչ իրենց մուտքի արտօնագիր կը պահանջեն իրենց թուրք այցելուներէն: Հարցը այն է, որ Թուրքերը եւրոպացի չեն եւ օր մըն ալ այդպէս չեն եղած: Անոնք ապրած են Ատանայի, Անգարայի կամ Կ. Պոլսոյ մէջ: Նոյնիսկ եթէ ոմանք գնահատեն Թուրք ժողովուրդի հիւրասիրութիւնը:

Եւրոպան կառուցուած է քրիստոնէութեան եւ լուսաւորութեան գոյգ աւանդներուն, եւ ո՛չ Թուրքիոյ վրայ:

Այսօր այս մեծ երկիրը կը յայտարարէ իր ձգտումը իսլամութեան եւ արդիականացումի միջեւ հաշտեցման: Փորձառութիւնը լաւ է, բայց մեզի չի հետաքրքրէ: Իսլամական աշխարհի բարեկարգումը կապ չունի Եւրոպայի հետ, ինչպէս որ այս վերջինիս հետ կապ չունի չինական աշխարհի կամ հնդկական աշխարհի տիրապետութեան հարցը: Եթէ օր մը կարիքը զգացուի իսլամական քաղաքակրթութեան բարեկարգման, ապա ասիկա պիտի ըլլայ նոյնիսկ իսլամներուն գործը, եւ ո՛չ թէ՛ մերը:

Գոյութիւն ունին պարզամիտ անձեր, որոնք կ'ըսեն, թէ Թուրք «չափաւորական» իսլամականները պէտք է համարուին Եւրոպայի հետ՝ իրրեւ պատենչ արեւելեան այլ երկիրներու դէմ, որոնք փորձած են իսլամական աւելի ծայրայեղ բնորդ մը:

Ասիկա տեսութիւնն է փարախին մէջ գտնուող աղուէսին, որուն յանձնարարուած է պաշտպանել տարածքը՝ որսորդական շուներուն խուճիկի դէմ:

Իրենց շահերուն գիտակից անկողնաքոնները բացայայտօրէն կը հաստատեն, որ իրենք վճարակաւոր են կը զօրակցին Եւրոպական Միութեան ընդարձակման: Միացեալ Նահանգներ կը զօրակցին այս գաղափարին, որովհետեւ անոնք իրականութեան մէջ չեն ուզեր հաստատութեան կառուցուածքով զօրաւոր Եւրոպայի մը ստեղծումը: Եւրոպա մը, որ օր մը կրնայ խախտել անոնց միջազգային տիրապետութիւնը, իսկ անգլիացիները միշտ ալ երազած են ազատ փոխանակման ընդարձակ տարածք մը, որ ապահովէ իրենց գերիշխանութիւնը անդրատլանտեան յարաբերութիւններու շրջագիծին մէջ: Իր իշխանութեան օրով զօր. Շարլ Տը Կոլ շատ լաւ հասկցած է այս երեւոյթը:

Անկողնաքոններու ճնշումին տակ Եւրոպա ընդարձակման հարցին գծով խնթ արշաւի մը ձեռնարկեց: Կ'ենթադրուի, որ Եւրոպական Միութիւնը պիտի բաղկանայ 25 երկրներէ: Եւրոպական Միութեան ընդարձակման իրագործումը պատմական սխալ մըն է: Ան թերեւս մահացու ըլլայ հաստատութեան կան Եւրոպայի համար:

ՌԵՆՕ ԺԵՐԱՐ

«Լը Ֆիկարօ»

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԵՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԶԻ ԿՐԵԱՐ ԻՐԱԿԱՆԱՆԱԿ 15-20 ՏԱՐԻԷՆ ԱՌԱՋ

«Երբ 1990ին այցելեցի Թուրքիա, իշխանութիւնները ինծի խոստացան որ շարժարանները պիտի դադարին: Այսօր, 2 տարի վերջ նոյն բանը կը խոստանան, բայց չեն իրագործեր»:

Թուրքիա այցելած Դանիոյ արտաքին գործոց նախարար Փէր Շթիկ Մէօլըր յայտարարեց, թէ Եւրոպական գերատեսչանէն առաջ մարդկային իրաւանց մարդին մէջ բարեկարգումները կրնան օգնել Թուրքիոյ, որ անդամակցութեան բանակցութեան թուական մը ստանայ: Թուրք բարձրատեսիւն պաշտօնատարներուն հետ խորհրդակցելի մէջ ետք Մէօլըր յայտնեց, թէ Թուրքիա այցելած է ոչ թէ բանակցութեան համար, այլ «տեսնելու, թէ բարեկարգումներու ծրագրին մէջ ի՞նչ յառաջդիմութիւն արձանագրուած է, ինչ որ Բոֆենհակընի մէջ մեր որոշումին մէջ դերակատարութիւն պիտի ունենայ»:

Այս պատճառով, Թուրքիոյ նոր կառավարութիւնը ոգի ի բռնի աշխատանքի լծուած է շարք մը բարեկարգումներ վաւերացնել տալու համար:

Թուրքիա ժամանելէն օր մը առաջ «Jyllands - Posten» դանիական թերթին հարցազրոյց մը տալով Մէօլըրը փոխել տուած է, որ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան խնդիրը չի կրնար իրականանալ թուականէս 15-20 տարիէն առաջ, եւ երբ Թուրքիոյ անդամակցութեան մասին կը խօսինք, մեր մտքէն չ'անցնիր որ իր անդամակցութեանն է ետք

Հայ - բիւզանդական յարաբերութիւններուն, Բիւզանդական կայսրութեան կազմին մէջ Հայ գործիչներու, գինուորականներու, ազնուականներու եւ հայկական զօրագունդերու դերակատարութեան եւ ղէպի կայսրութեան տարբեր երկրամասեր հայերու իրերայաջորդ գաղթներուն անդրադարձած ենք նախապէս՝ հասնելով մինչեւ Հերակլիոսներու հարստութեան հաստատումը եւ Հերակլիոս կայսեր ժամանակաշրջանը, է. դար: Այժմ կը ներկայացնենք Հերակլիոսներու հարստութեան յաջորդող կայսրերու ժամանակաշրջանը:

ԿՈՍՏԱՍ Բ. ԿԱՅՍԵՐ ԳԱՀԱՎԱԼՈՒԹԵՆԸ ԵՏՔ

Հերակլիոս կայսեր մահէն ետք, 641 Փետրուարին անոր յաջորդեց զաւակը՝ Հերակլիոս կոստանդին (կոստանդին Գ.), որ սակայն երեք ամիս միայն գահակալեց եւ մահացաւ Մայիսին, հաւանաբար թոքախտի պատճառով:

Հերակլիոս կոստանդինի յաջորդեց տասնմէկամեայ զաւակը՝ Կոստաս Բ. Փոկոնաթոս, որ ծնած էր 630ին, Պոլիս: Անչափահասութեան պատճառով ծերակոյտը ստանձնեց պետական գործերուն վրայ հսկողութիւնը, եւ այդ իսկ պատճառով պարբերաբար խռովութիւններ ծագեցան աւագանիէն ներս:

Արդէն սկսած էին արաբական արշաւանքները Բիւզանդական կայսրութեան սահմաններէն ներս. Պաղեստինն ու Սուրիան նուաճելէ ետք անոնք հասան Հայաստանի սահմանները, ուր Հայ զօրքեր գերմարդկային ճիգերով պայքարի դաշտ իջան ներխուժող զօրքերուն դէմ: Կոստաս Բ. կայսր մեծ դժուարութեամբ յաջողեցաւ կասեցնել արաբներուն յառաջխաղացքը դէպի կայսրութեան խորքերը, որմէ ետք, ընդունալով հայոց ներսէս Գ. Տաւցի կաթողիկոսին ղիմումին, Հայաստանի իշխան նշանակեց Թէոդորոս Ռշտունին՝ անոր շնորհելով պատրիկի եւ կիւրաղապարի տիտղոսներ:

Արաբներ 643ին երրորդ մեծ արշաւանքի մը ձեռնարկեցին Հայաստանի վրայ, բայց բիւզանդական բանակը հայոց օգնութեամբ յաջողեցաւ կասեցնել անոնց յառաջխաղացքը: Սասանեաններու մայրաքաղաք Տիգրան գրաւելէն ետք, արաբներ 644ին Բիւզանդիոնէն գրաւեցին Եգիպտոսը: Միաժամանակ, Բիւզանդիոնի հիւսիսային սահմաններուն վրայ, Պալքաններուն կողմէ անոր սկսան սպառնալ սլաւոնները, իսկ իտալական սահմաններուն վրայ՝ Լոմպարտացիները: Պոլսոյ արքունիքը երկու սուրբ միջնե զգալով ինքզինք սկսաւ վերակազմել իր ուժերը: Բանակը, յատուկ կարգադրութեամբ մը, հրամանատարական նոր թեմերու բաժնուեցաւ եւ հակադրակուսի անցնելով վերագրաւեց որոշ շրջաններ: Կիրիկիոյ սահմաններուն վրայ, Ամանոս լեռան շրջանը եւ Կիրիկիայէն հիւսիս գտնուող Իսաւրիան արիւնահեղ կռիւներու թատերաբեմ դարձան բիւզանդական եւ արաբական բանակներուն միջեւ:

Ստեղծուած կացութեան առջեւ հայոց իշխան Թէոդորոս Ռշտունի ամբողջը Հայաստանի բերդերը, զօրացուց այրուածին եւ յաջողեցաւ դէմ դնել արաբներու յարձակումներուն: Սակայն Կոստաս կայսր դժգոհ մնալով անոր վարած ինքնուրույն քաղաքականութենէն՝ 646ին հեռացուց զայն իր պաշտօնէն եւ հայոց իշխան նշանակեց Թովմա անուանով ազնուական մը: Թովմա Կոստայի մէջ դաւադրաբար կայանաւորեց Թէոդորոս Ռշտունին եւ ամբաստանութեան տակ առնելով զայն՝ ղրկեց Պոլիս: Բայց յետոյ կայսրը, նկատի ունենալով անոր յանցապարտութիւնը եւ հայոց դժգոհութիւնը, ետ կանչեց Թովման եւ Թէոդորոս Ռշտունին վերադարձուց Հայաստան: Նոյն օրերուն՝ 646ին Ափրիկէի իր քաղաքավայրերէն Պոլիս վերադարձած վարազտիրոց Բագրատունի ծպտուած փախաւ Տրապիզոն եւ հոնկէ՝ Տայք, ուր հաստատուած էր Բագրատունիներու մէկ ճիւղը: Պոլիսէն հրամանով ղարկուեցաւ զայն բռնելու, բայց վարազտիրոց ներսէս Գ. Տաւցի կաթողիկոսին միջնորդութեամբ գրաւոր հաւատարմագիր ուղարկեց կայսրը՝ համոզելով զայն, որ ինք հաւատարիմ կը մնայ բիւզանդական գահին: Անուհետեւ Կոստաս Բ. կիւրաղապարի աստիճանի արձակեց գահ շնորհեց անոր եւ Հայաստանի իշխանն ու կառավարիչ նշանակեց զայն: Սակայն մինչեւ կայսրը հրովարտակին տեղ հասնիլը վարազտիրոց իշխան յանկարծամահ եղաւ, հետեւաբար անոր շնորհած աստիճանը փոխանցուեցաւ զաւակին՝ Սմբատի:

Ներքին ճակատի վրայ Կոստաս Բ. կայսր աշխատեցաւ եկեղեցական միութիւն հաստատել. այս նպատակով ալ ան 648ին թիփոս անուանով հրովարտակ մը հրապարակեց, ուր կայսրութեան սահմաններէն ներս գործող քրիստոնեայ բոլոր եկեղեցիները Պոլսոյ պատրիարքութեան ենթակայ հռչակեց եւ արգիլեց արժարժեղ Գրիգորի աստուածային եւ մարդկային բնութեան հարցը: Կայսրական հրովարտակը մեծ դժգոհութիւն յառաջացուց ինչպէս Հայ, այնպէս ալ այլ ժողովուրդներու մէջ: Հռոմի Մարտինոս Ա. պապը դատապարտեց հրովարտակը, որուն պատճառով հետագային կայսրը արքայի դատապարտեց զայն: Կոստաս Բ. կայսր, իր կողքին ունենալով Պոլսոյ պատրիարքը, Հայերուն յունական եկեղեցույ հետ միութիւն պարտադրեց: Ստեղծուած կացութեան առջեւ նոյն օրերուն՝ 688ին,

ՀԱՅ - ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՍՏԱՍ Բ. ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Դուրսի մէջ Ներսէս Գ. կաթողիկոսի եւ Թէոդորոս Ռշտունիի գլխաւորութեամբ եւ հայ իշխաններու ու հոգեւորականներու մասնակցութեամբ ժողով կայացաւ, որուն ընթացքին մերժուեցաւ կայսեր դաւանական միութեան առաջարկը:

ՀԱՅ - ԱՐԱԲԱԿԱՆ ԴԱՇԻՆԸ

Արաբներ 651ին կրկին անգամ եւ մեծ ուժերով, Ատրպատականի կողմէն, երեք թեւերու բաժնուած ներխուժեցին Հայաստան եւ հասան Կողովոտ, պաշարեցին Արծափ բերդը եւ ներս խուժելով կոտորեցին բերդապահներուն մէկ մասը: Օրհասական այդ պահուն վրայ հասաւ Թէոդորոս Ռշտունի եւ յարձակելով արաբներուն վրայ բնաջնջեց արաբական ամբողջ զօրամասը՝ սպաննելով նաեւ անոր երկու հրամանատարները:

Պատերազմի դաշտին վրայ մնացած հարուստ աւարէն Թէոդորոս իշխան կայսեր ուղարկեց արաբական հարիւր ձի: Կայսրը իր յատուկ գոհունակութիւնը յայտնեց հայոց տարած յաղթանակին եւ իրեն ընծայուած ձիերուն համար:

Սասանեան պետութիւնը վերջնականապէս կործանելէ ետք, արաբներ 652ին կրկին հասան Հայաստանի սահմանները, երբ Թէոդորոս Ռշտունի, Բիւզանդական կայսրութեան նոր խարդաւանանքները ղիմագրաւելու նպատակով իր շուրջ համախմբեց հայոց, աղուանից եւ Քարթլիի ազդեցիկ իշխանները, բանակցութեան մէջ մտաւ Ատորիքի արար կառավարիչ Մուսաիլիսի հետ եւ դաշինք կնքեց անոր հետ, որուն համաձայն, Հայաստան կը ճանչնար խալիֆայութեան գերիշխանութիւնը, որ իր կարգին կը խոստանար թեթեւեղ տուրքերը, պահպանել հայոց այրուածին տասնհինգ հազար զինուոր, ինչպէս նաեւ կրօնի ազատութիւնը եւ տեղական կառավարման ինքնուրույնութիւնը: Արաբներ կը խոստանային նաեւ օգնական զօրք ղրկել, երբ բիւզանդացիք արշաւէին Հայաստան:

ԿՈՍՏԱՍ Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Կոստաս Բ. կայսրը համար անակնկալ էր հայոց դաշնակցութիւնը արաբներուն հետ: Հայոց օգնութեամբ գտնուող բիւզանդական զօրքը Թէոդորոս Ռշտունիի դէմ դժգոհութեան եւ բողոքի նամակներ ուղարկեց կայսրը՝ ամբաստանելով զայն կայսերական զօրքը Ատրպատականի կողմերը ցրուելու եւ արաբներուն հետ անակնկալորէն կոտորելու յանցանքով: «Ինչ որ ունէիք, կորաւ. թոյլ սուր մեզի վրէժ լուծել մեր կրած վիրաւորանքներուն համար», կ'ըսէր կայսերական զօրքին հրամանատարութիւնը:

Կայսրը նախ փորձեց հայ իշխանները իր մօտ կանչել եւ համաձայնութիւն գոյացնել անոնց հետ՝ խոստանալով անոնց օգնական զօրք տալ ընդդէմ արաբներուն, բայց ապարդիւն:

Այս պայմաններուն տակ Կոստաս կայսր 654ին մեծ բանակի մը (մօտաւորապէս 100 հազար) գլուխը անցած՝ մտաւ Հայաստանի սահմանները: Ստեղծուած ծանրակշիռ կացութեան առջեւ նախարարները չկարողացան միասնական դիրք ձևողի: Թէեւ, ըստ դաշինքին, արաբները պիտի պաշտպանէին Հայաստանը բիւզանդական արշաւանքի պարագային, բայց ոչ մէկ ղիմագրութիւն ցոյց տուին, եւ բիւզանդական զօրքը հասաւ Կարին: Սպիտակառի Բագրատունիները, կարնեցիները, գաւայեցիները, Նորխուրուիները եւ այլ գաւառներու տէրեր, ինչպէս նաեւ Ներսէս Գ. կաթողիկոս ընդառաջ գացին կայսրը եւ ներկայանալով անոր Կարնոյ մէջ բանակցութեան ստան: Կայսրը որոշումով Թէոդորոս Ռշտունիի նկատուեցաւ ապստամբ, նոսրուեցաւ եւ գրկուած հռչակուեցաւ իշխանութենէ: Թէոդորոս Ռշտունի ձերբակալեց իր մօտ ուղարկուած մարդիկը եւ քաշուելով Աղթամար՝ հրամայեց, որ իրեն հաւատարիմ մնացած զօրքերը ցրուին եւ ամբաստան լեռները՝ սպասելով նոր կարգադրութեան: Նոյն օրերուն Թէոդորոս վահեուրի գրաւեց Արփայս բերդը, իսկ վարազ Ներսէս՝ Հայաստան գտնուող արքունական բոլոր գանձերը:

Կոստաս Բ. կայսր սկսաւ պատրաստուել կարինէն շարժելու համար դէպի հայոց աշխարհի խորքերը, բայց Ներսէս կաթողիկոս եւ անոր շուրջ խմբուած իշխանները աղաչեցին կայսրը, որպէսզի ինչպէս երկիրը եւ քառուքանդ շինք քանի մը ըմբոստներու պատճառով: Կոստաս Բ. գիշերով թախանձանքներուն՝ զօրքին մեծ մասը պահեց, իսկ մնացեալ քան հազար զինուորներուն գլուխը անցած՝ մտաւ Դուրն, իջնուեցաւ հայոց կաթողիկոսարանը եւ պահանջեց, որ հայ եկեղեցին ընդունի քաղկեդոնականութիւնը: Ներսէս Գ. կաթողիկոս հարկադրաբար տեղի տուաւ, որմէ ետք աթոռանիստ Ս. Գրիգոր եկեղեցույ մէջ յունական ծէսով պատարար մատուցուեցաւ, որուն ըն-

թացքին կաթողիկոսը եւ եպիսկոպոսները հաղորդուեցան կայսր հետ:

ՊԱՅՔԱՐ ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՉՕՐՔԵՐՈՒՆ ԴԵՄ. ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՒՍՏՈՒՄ

Սակայն Կոստաս կայսր չէր կրնար երկար մնալ Հայաստան. հետեւաբար ան Դուրնի մէջ պահապան զօրք մը ձգելով եւ Թէոդորոս Ռշտունիի փոխարէն Մուշեղ Մամիկոնեանը հայոց իշխան եւ սպարապետ նշանակելէ ետք վերադարձաւ Պոլիս: Կայսրը հրամայեց Մուշեղ Մամիկոնեանին մեկնել վասպուրական եւ նուաճել Ռշտունեաց ապստամբ իշխանը:

Մինչ այդ, Թէոդորոս Ռշտունի եւ իր փեսայ Համագասպ Մամիկոնեան Աղթամարի մէջ ամրացած՝ կը սպասէին արաբական զինուորական խոստացուած օգնութեան, երբ արաբական եօթը հազարնոց բանակ մը աշնան հասաւ Ադրիոլիոս եւ Բզնուիք: 655ի գարնան սկիզբը Թէոդորոս Ռշտունի դուրս գալով Աղթամարէն իր զաւակին՝ վարդի հետ մեծ արշաւանքի մը ձեռնարկեց Մուշեղ Մամիկոնեանի եւ յունական զօրքին դէմ, ցիր ու ցան ըրաւ զանոնք եւ քշեց մինչեւ Տայք ու հոնկէ՝ Տրապիզոն:

Այս յաղթանակից ետք ան մեկնեցաւ Դամասկոս եւ ներկայանալով խալիֆայի փոխանորդ Մուսաիլիսի՝ իրեւ դաշնակից փառաւոր ընդունուեցութեան արժանացաւ. Մուսաիլիս ինկազիտ Ռշտունի տուաւ անոր եւ իրեն թանձնեց նաեւ վրաստանի ու Աղուանքի կառավարչութիւնը:

Հայաստան վերադառնալէն ետք Թէոդորոս Ռշտունի հիւանդացաւ եւ պետական գործերը ձգելով՝ քաշուեցաւ Աղթամար: Առիթէն օգտուելով նախարարները միացան եւ սկսան տուրքեր հաւաքել գիւղացիներէն: Ապստամբեցան նաեւ Կրացիք:

Առիթը վարած նկատելով, նոյն օրերուն՝ 655ին արաբական զօրքեր կրկին մտան Հայաստան: Հայաստանի բիւզանդական զօրքի հրամանատար զօրավար Մուսաիլիս, որ Դուրնի բերդին մէջ ամրացած էր, ի դուր աշխատեցաւ կասեցնել անոնց յառաջխաղացքը: Երբդ աւերելէ ետք ան շարժեցաւ դէպի Նախիջեւան, բայց պարտուեցաւ: Արաբներ նախարարները հնազանդութեան տակ պահելու համար անոնցմէ 1775 պատանդ վեցուցին եւ քշեցին Դամասկոս: Թէոդորոս Ռշտունի յօժարակամ միացան անոնց՝ հաւանաբար կրկին Մուսաիլիս տեսնելու համար, բայց Դամասկոսի մէջ մահացաւ. մարմինը փոխադրուեցաւ իր հայրենի Ռշտունիք գաւառը եւ հոն թաղուեցաւ:

Նոյն օրերուն արաբական եւ բիւզանդական նաւատորմները ահեղ ծովամարտի մը բռնուեցան Փոքր Ասիոյ ծովափներուն: Կոստաս կայսր մեկնեցաւ ճակատ եւ ստանձնելով նաւատորմին հրամանատարութիւնը՝ աճանապէս սկսաւ վարել ծովամարտը: Թշնամի մարտանաւերը կատարորէն իրարու վրայ կը յարձակէին եւ գիրար կ'ընկղմէին. բիւզանդական նաւատորմը ծանր կորուստներէ ետք սկսաւ տկարանալ. արաբներ սաստկացուցին յարձակումները, մինչեւ որ կայսերական ամբողջ նաւատորմը հիմնովին ջախջախուեցաւ. Կոստաս կայսր ստոյգ մահէ փրկուեցաւ իր մէկ զինուորին հերոսութեան շնորհիւ, որ յաջողեցաւ վերջին փրկանաւով ցամաք փոխադրել զայն:

ՀԱՄԱՉԱՍՊ ՄԱՍԻԿՈՆԵԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՇՐՁԱՆԸ

Հայաստանը նուաճելէ ետք արաբներ Թէոդորոս Ռշտունիի փոխարէն անոր փեսայ Համագասպ Մամիկոնեանը կառավարիչ նշանակեցին: Սկսաւ կեղեքումներու ու խտրութիւններու շրջան մը ժողովուրդին համար: Համագասպ Մամիկոնեանի հաւանութեամբ Ներսէս Գ. կաթողիկոս ղիմեց Կոստաս Բ. կայսրը, որպէսզի օգնէ իրենց՝ երկիրը ազատելու համար արաբներէն: Կոստաս կայսր ընդառաջեց ղիմումներ եւ սկսաւ պատրաստութիւն տեսնել, մինչ արաբները պատասխանեցին՝ կոտորելով Դամասկոս տարուած 1775 պատանդները, որոնցմէ ազատեցաւ միայն քսան հոգի:

Նոյն օրերուն, 656 Յունիսի սպանուեցաւ Օսման խալիֆա անոր յաջորդեց Ալի Պըն Ապի Թալէպ, որ մայրաքաղաքը փոխադրեց Բուֆա. անոր դէմ պայքարի դաշտ իջաւ Ատորիքի կառավարիչ Մուսաիլիս, որ գրաւեց գահը եւ Դամասկոսը հռչակեց խալիֆայութեան մայրաքաղաք՝ դառնալով հիմնադիրը Օմայեաններու հարստութեան (Ալի սպանուեցաւ 661 Յունուարին, Բուֆայի մէջ):

Արաբական խալիֆայութեան մէջ բռնկած դաճակալական կռիւներէն օգտուելով, նոյն օրերուն՝ 656ին Համագասպ Մամիկոնեանի հիւզանդիոնի հետ դաշնակցելով թօթափեց արաբական գերիշխանութիւնը: Նոյն տարին նախարարներու ժողովը զայն պաշտօնապէս ընտրեց հայոց իշխան, իսկ Կոստաս Բ. կայսր անոր շնորհեց կիւրաղապարի կոչում, արժաթեայ գահ նուիրեց եւ իր զօրքերը քաշեց Հա-

յաստանէն:

Մուսաիլիս, ներքին կռիւներէն տկարացած, հարկադրաբար, եւ իր ուժերը վերակազմելու ժամանակ ունենալու համար 659ին Բիւզանդիոնի հետ խաղաղութեան եւ ոչ յարձակողական դաշինք կնքեց՝ տուրք վճարելու յանձնարուեցաւ եւ Հայաստանէն հրաժարելու պայմանով. հայ - արաբական սահմանը դարձաւ Տաւրոսեան լեռներուն հարաւը. արաբական զօրքեր մնացին միայն Չորրորդ Հայքի մէկ մասին մէջ:

Մինչ այդ, բիւզանդական արքունիքին մէջ ներքին իրադարձութիւնները անպակաս էին. կայսրը իր զաւակը՝ Կոստանդինը փոխ կայսր հռչակելէ ետք, եղբայրը՝ Թէոդոսիոսը զրկեց յաջորդութեան իրաւունքէ եւ 660ին սպաննել տուաւ զայն:

Իրեն մրցակից Ալիի հետեւորդները՝ շիաները պարտութեան մատնելէ ետք, 661 Յունուարին Մուսաիլիս վերականգնեց արաբական բանակը եւ արագօրէն վերագրաւեց խալիֆայութեան ենթակայ երկիրները. նոյն օրերուն արաբական զօրքեր ներխուժեցին Բիւզանդական կայսրութեան սահմաններէն ներս: Համագասպ Մամիկոնեան, ըմբռնելով կացութեան փոփոխութիւնը, կրկին ընդունեց արաբական գերիշխանութիւնը՝ Հայաստանը գերծ պահելով աւերիչ արշաւանքէն, բայց նոյն օրերուն՝ 661ին մահացաւ:

ԳՐԻԳՈՐ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉՈՒՄ

Համագասպ Մամիկոնեանի մահէն ետք հայոց նախարարները խորհրդակցութեան նստան, թէ ո՞վ պիտի յաջորդէ անոր: Նախարարները թիւսմանակ այն եզրակացութեան հասան, որ պէտք է անցնել արաբներուն կողմը եւ խալիֆայէն խնդրել, որ կառավարիչ նշանակէ Համագասպի եղբայր Գրիգոր Մամիկոնեանը: Նախարարներու թախանձանքին ընդառաջելով՝ յունասէր նկատուած Ներսէս Գ. կաթողիկոս յարեցաւ անոնց եւ ղիմելով Մուսաիլիսի յաջողեցաւ Դամասկոս գտնուող Գրիգոր Մամիկոնեանը (որ մէկն էր կոտորածէն ազատած քսան պատանդներէն) կառավարիչ նշանակել տալ: Բայց նոյն տարին՝ 661ին վախճանեցաւ Ներսէս Գ. կաթողիկոս. ան նշանաւոր դարձած էր իր կատարած շինարարական աշխատանքներով եւ հետեւաբար կոչուեցաւ Շիրտոյ: Հայ ճարտարագիտութեան գլուխ գործոց էր մանաւանդ անոր կառուցած Զուարթնոց տաճարը վաղարշապատի մէջ, ուր ան Դուրնի տեղափոխած էր իր աթոռը, եկեղեցույ կողքին ապարտեց կառուցելով իրեն բնակութեան համար:

Գրիգոր Մամիկոնեանի իշխանութեան հաստատումով Հայաստան դարձաւ կիսանկախ. ծայր առին շինարարական աշխատանքներ. Գրիգոր Մամիկոնեանի նստավայր Արուսի մէջ (վաղարշապատի շրջան) կառուցուեցաւ Ս. Գրիգոր եկեղեցին եւ պալատ, իսկ Եղվարդ գիւղին արեւելքը՝ վանք, որ դպրութեան կարեւոր կեդրոնի վերածուեցաւ:

ԱՐԱԲ-ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱՉՄՆԵՐ

Բիւզանդիոնի եւ արաբական խալիֆայութեան միջեւ կռիւները 663ին վերսկսան ամենասաստիկ կերպով, սակայն Հայաստան առժամաբար դուրս մնացած էր անոնց մրցադաշտէն: Մուսաիլիս խալիֆա իր հարուածները ուղղեց դէպի Պոլիս եւ ցամաքէն Փոքր Ասիոյ վրայ, ինչպէս նաեւ ծովու վրայ մեծ արշաւանքի ձեռնարկեց: Բիւզանդացիք ծանր կորուստներու ենթարկուեցան եւ մեծ քանակութեամբ աւար ձգելէ ետք արաբներուն ձեռքը քաշուեցան Փոքր Ասիոյ խորքերը:

Կոստաս Բ. կայսր, ստեղծուած դրութիւնը նկատի ունենալով՝ որոշեց կայսրութեան եւերոպական երկրամասերուն վրայ աւելի կեդրոնանալ եւ զանոնք իր ուղարկութեան առարկայ դարձնել. այս նպատակով ալ ան նոյն տարին՝ 663ին շրջապատյալ ձեռնարկեց դէպի արեւմուտք, Պալքանները շրջելէ ետք անցաւ հիւսիսային Իտալիա, կայսրութեան հիւսիսային եւ հիւսիս - ար

ԹՈՒՐԻՔԻՈՅ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ...

Շարունակում՝ 6րդ էջէն

այսօրուան թուրքիայէն տարբեր թուրքիոյ մը մասին կը խօսինք: Աւելցուց նաեւ, որ թուրքիոյ հետ բանակցութիւններ սկսելու թուականը հազիւ 2003ին կրնայ ճշդուիլ: Յամենայնդէպս, Դանիա վերապահ է թուրքիոյ անդամակցութեան եւ իր կողմէ նախաձեռնութիւններու կապակցութեամբ: «Յաճախ ակա-նատես եղած ենք թուրքիոյ նախաձեռնութիւններուն եւ գիտենք թէ ինչ են անոնք, եւ գիտենք նաեւ թէ ինչ»

ձեռքով կը գործեն Երեւանի, Գիւմրիի եւ Վանաձորի տիկնիկային թատրոնները: Երեւանի Յովհաննէս թուականներ անուան տիկնիկային թատրոնը հիմնադրուած է 1935ի Յուլիս 5ին: Թատրոնին առաջին բեմադրիչը եղած է Սոֆիկ Պեճանեան, առաջին տնօրէնը՝ Վարդ Ստեփանեան: Թատրոնի մէջ բեմադրութիւն ըրած են՝ մեծն Վարդան Աճէմեանը, Տիգրան Շամիրխանեանը, Երուանդ Մանարեանը, Ռուբէն Մարուխեանը, Ռուբէն Բարայեանը եւ ուրիշներ: Իր գոյութեան 67 տարիներուն ընթացքին թատրոնը ստեղծած է հայ տիկնիկային թատերական արուեստի ազգային իր դիմագիծը՝ հանդիսատեսի դատին

ձեռով կը գործեն անոնք: Երբ 1990ին այցելեցի թուրքիա ինձի խոստացան որ չարչարանքները պիտի դադրին: Այսօր, 12 տարի վերջ նոյն բանը կը խոստանան, բայց չեն իրագործեր: Դանիացի նախարարը գնահատեց, որ «Եթէ կ'ուզենք խուսափիլ իսլամական զինուորական մեծ ուժի մը հաստատումէն, արթուն պէտք է մենք պահպանելու համար թուրքիոյ պահանջներուն դիմաց եւրոպական տեսլականներ»:

Դանիացի նախարարը թուրքիոյ մէջ իր այցելութիւնը աւարտելով այսօր կը ժամանէ Աթէնք՝ հելէն իշխանութիւններու հետ խօսակցութիւններ ունենալու համար:

«ԱՅԴ ԱՊՐԵԼ Է ...»

Շարունակում՝ 5րդ էջէն

ղերասաններու եւ թեր-նիք բաժինի անձնակազմին հետ կ'իրագործէ ներկայացումը:

Հայաստանի մէջ կը գործեն Երեւանի, Գիւմրիի եւ Վանաձորի տիկնիկային թատրոնները: Երեւանի Յովհաննէս թուականներ անուան տիկնիկային թատրոնը հիմնադրուած է 1935ի Յուլիս 5ին: Թատրոնին առաջին բեմադրիչը եղած է Սոֆիկ Պեճանեան, առաջին տնօրէնը՝ Վարդ Ստեփանեան: Թատրոնի մէջ բեմադրութիւն ըրած են՝ մեծն Վարդան Աճէմեանը, Տիգրան Շամիրխանեանը, Երուանդ Մանարեանը, Ռուբէն Մարուխեանը, Ռուբէն Բարայեանը եւ ուրիշներ: Իր գոյութեան 67 տարիներուն ընթացքին թատրոնը ստեղծած է հայ տիկնիկային թատերական արուեստի ազգային իր դիմագիծը՝ հանդիսատեսի դատին

յանձնելով շուրջ 260 բեմադրութիւն, գրաւելով ակելի քան 15 միլիոն հանգիսատեսներ: Թատրոնը մասնակցած է միջազգային բազմաթիւ փառատոներու եւ հիւրախաղերու՝ յաճախ շահելով փառատոներու գլխաւոր մրցանակը:

Բոլորովին վերջերս թատրոնը, «Հայի բախտ» ներկայացումով, մասնակցելով Իրանի մէջ կազմակերպուած միջազգային փառատոնին՝ նուաճեց «Ոսկէ տիկնիկ» կարեւոր մրցանակ եւ արժանացաւ կարգ մը գովասանագիրներու...

Տիկնիկային թատրոնին մէջ ինչ լեզու ալ խօսին, կայ մէկ պատգամ՝ մանուկ հանդիսատեսի հոգիին մէջ սերմանել բարութիւն, ազնուութիւն եւ մարդասիրութիւն: Եւ այդ պատգամը տիկնիկային թատրոնին համար «Ապրել է կոչուում»:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանի մէջ օտար դրամանոցներու փակման սակագիւցերը հետեւեալներն էին երէկ.	
Սուրիական թրոսուկի	32,50 - 32,60 լ.ն.
Իրաքեան տիւար	4850,00 - 4860,00 լ.ն.
Քուէյթեան տիւար	4968,00 - 4988,00 լ.ն.
Յորդանանեան տիւար	2106,00 - 2116,00 լ.ն.
Պահրէյսեան տիւար	3960,00 - 3985,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տիւար	408,00 - 410,00 լ.ն.
Քարաքանի տիւար	411,00 - 413,00 լ.ն.
Սէլուսեան տիւար	399,30 - 401,30 լ.ն.
Օմանեան տիւար	3870,00 - 3895,00 լ.ն.
Եգիպտական կիւն	290,00 - 300,00 լ.ն.
Անգլիական սթըրլին	2356,00 - 2366,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1025,00 - 1030,00 լ.ն.
Թրքական լիրա	98,50 - 98,75 լ.ն.
Կիպրական փաուստ	2625,00 - 2650,00 լ.ն.
Ճապոնական հապար եէն	12,10 - 12,20 լ.ն.
Ավստրալական հապար ֆրանք	2,30 - 2,35 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	960,00 - 965,00 լ.ն.
Աւստրալական տոլար	840,00 - 845,00 լ.ն.
Եւրո	1513,00 - 1523,00 լ.ն.

● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	121,500 - 126,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	115,000 - 120,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	105,000 - 110,000 լ.ն.
Մեքսիկական փէսոս	585,000 - 605,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի	15,650,000 - 15,850,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	326,00 - 326,50 \$
Մէկ օնս արծաթ	4,60 - 4,62 \$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	1.0095 - 1.0100
Քանադական տոլար	1.5575 - 1.5585
Չուիցերիական ֆրանք	1.4595 - 1.4600
Ճապոնական եէն	123.35 - 123.40
Մէկ սթըրլին	1.5735 - 1.5740
Մէկ տոլար	586 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԵՐԻ	
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 5/8 5
Բ. կարգ	4 7/8 5
ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՃԱՒԵՆ ԼԵՌ. 01-252852	

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՍԱՍԿՈՍ ԴԱՍԱՍԿՈՍ

ԼՈՒՍՆԹԱԳ ՄԵԼԻՋԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5319

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՈՒՂԱԿԱՆՅԵԱՑ

1. Հայոց կաթողիկոս՝ Միքայէլ Ա.:	1. Հայաստանի քաղաքներէն - Ուոնակ:
2. Արդարեւ - Գեղամ Սարգսի երկերէն:	2. Թուրքիայի թատրոններու խումբ - Բացառիկ:
3. Քարայտակ - Կրկնուած բաղաձայններ:	3. Հաւկիթի զեղնուց - Գիրոց:
4. Ստացական ածական - Ցանցամաշկ:	4. Ոտքով տրուած հարուած:
5. Արական օտար անուն - Վանայ լիճի կղզիներէն:	5. Բազմութիւն - Ազնուականի տիտղոս:
6. Յոգնակերտ մասնիկ - Կրկնուած տառեր - Այրուրեանէն:	6. Պուրկի կամ խամաճիկ - Ամօթ:
7. Հարուած - Ապականութիւն:	7. Մովարի քաղաքներէն - Մեղկանայ:
8. Սոյր - Քինախնդիր:	8. Ցաքանով արտերուն հողերը հաւասարեցնել - Ժամանու:
9. Անքան հսկող - Սուտանի լիճերէն:	9. Ինքնավար:
10. Զիւթ - Ալպիւմին:	10. Հասկցի՛ր - Զրիմուռ:

ԹԻՒ 5318

ԽԱՉԲԱՌԻ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Տ	Ք	Փ	Ա	Ն	Ս	Ս	Ս	Ս
2	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
3	Ա	Պ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՒՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

19ԳԴ ԳԱՐՈՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՍԱՄՈՒԷԼ ՓՐՈՒԹԻ ԳՈՐԾԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ

Գեկտեմբեր ամսուան ընթացքին «Ամաթօր» ցուցասրահին մէջ կը ցուցադրուին 19րդ դարու վիպապաշտ գեղանկարիչ Սամուէլ Փրուսի (1783-1852) գեղանկարներու մէկ հաւաքածոն: Սամուէլ Փրուսի եղած է իր ժամանակաշրջանի նշանաւոր արուեստագէտներէն մէկը, որուն գործերը իր կենդանութեան ժամանակ իսկ ցուցադրուած են Անգլիոյ «Ռոյալ Էքսիբիթի» եւ Բրիտանական հիմնարկութեան մէջ:



Նմուշ մը՝ Սամուէլ Փրուսի գործերէն

Սամուէլ Փրուսի իր գործերուն կարեւոր մասը ստեղծագործած է ջրաներկով: Ան ունի բնակարաններու եւ քաղաքային տեսարաններու գործեր: 1812-1844 տարիներուն ան հրատարակած է 18 ուսումնասիրութիւններ եւ ուղեգրութիւններ, որոնք նուիրուած են Անգլիոյ եւ Եւրոպայի զանազան քաղաքներու կառոյցներուն: Յատկանշական է այն, որ արուեստագէտը պատկերապարզած է իր գրած գիրքերը: Անոր

գործերուն շարքին են նաեւ նկարչական արուեստի դասաւարտութեան գիրքեր եւ ուղեցոյցներ: Իր կեանքին ամբողջ ընթացքին եւրոպական մայրաքաղաքներու փոփոխութիւններ, հրապարակներ, շուկաներ, նշանաւոր կառոյցները, շէնքերը եւ անոնց մթնոլորտը գեղանկարներու վերածած Սամուէլ Փրուսի լիբանանեան այս ցուցահանդէսը առիթ մը պիտի ըլլայ արուեստագիտական ասոյնի մօտէն ճանաչելու անոր գործերը:

Նկարչական ցուցահանդէս. կը ցուցադրուին Յակոբ Գեորգեանի գործերը, «Արուստան Արք Սեֆրըրը»: Նկարչական ցուցահանդէս, «Ջեքիթա Պէյրուս», Նըմէ հրապարակ: Նկարչական ցուցահանդէս՝ Վահրամ, «Նոս Գ Արք» ցուցասրահի մէջ: Փոլ Կիրակոսեանի նուիրուած ցուցահանդէս, «Էմմալուս» ցուցասրահի մէջ:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

10:00. Սապահո	20:00. Արաբերէն լուրեր	15:20. Մուլտտերիալ «Վերջին ապաստանը»
12:00. Շիֆր է	20:30. Այլ ֆախ	15:35. Իմ սէր, իմ հաւատ, իմ եկեղեցի
12:30. Ղանիլի ղանիլի	21:30. Ղանիլի շուէյ	16:00. Հեռուստատեսիալ «Սիրոյ կախարհանք»
13:00. Մաքուլ հանա	23:00. Արաբական ֆիլմաշար	17:00. Երեւան Երեւան
14:00. Եւրոնիոլ	ԷՆ. ՊԻ. ԵՆ. 13:00. Վաւերագրական 14:30. Թահքիթ ալ էսոււմ	17:20. Փաստագրական ֆիլմ «Վէճ»
14:30. Լուրեր	15:00. Լուրեր	17:50. Մանրամասներ
15:00. Սըշուար	16:00. Ռայի ամս	18:00. Այլուր
17:30. Տիլմաշար	18:30. Սինեմա/35 mm	18:10. Կնոջ հիմարի զարտնչոր
18:30. Ապու Մըլիէմ	19:00. Լուրեր	18:35. Տուն-տունիկ
19:30. Արաբ. լուրեր	20:00. Պուրաս, իթթիաստ, 19:00. Հայուր	19:45. Որակի նշան
20:00. Մոտելիս	20:30. Մուխրասար մուֆիտ	20:00. Փաստագրական սերիալ «Դարի հսկաները»
21:00. Կատակերգական յայտագիր	22:00. Մասախյա	21:00. Ռուպիթնոս
21:30. Տեղական ֆիլմաշար	23:00. Տնտեսական լուրեր	22:00. Հայուր
23:00. Ապու Թայէպ Ալ Մուրասապի	23:30. Թահքիթ ալ էսոււմ	22:20. Կէս գիշերային ձեպրնթաց

ԷԼ. ՊԻ. ՍԻ.

7:00. Սի. Էն. Էն.ի լուրեր	7:30. Ինսայտ Եւրոփ
8:30. Մա իսթր իլ	9:00. Լէրի Քինկ
9:30. Լէրի Քինկ	10:00. Տիփոմաթիթ յայտագիր
10:30. Նահարքում սայիտ	11:30. Ըպի Ստոտալ
12:30. Արաբական յայտագիր	13:00. Մորելիա
14:00. Հիսստ	14:30. Մորելիա
15:00. Լուրեր	15:15. Թիլ քայլ
16:45. Պիկ պէյր	17:45. Տէք Ֆրոսթ
18:30. Պիկ Պէյր	18:45. Մըն Էժոլ Էլէնա
19:44. Օննդեան յայտագիր	19:45. Արաբերէն լուրեր
20:35. Հըլիս ուս	21:30. «Չէմփիլըզ Լիկ»

ՄՈՒԹՄԵՊՈՒԼ

7:00. Լուրեր	8:30. Այսմ ալ սապահ
11:00. Մաքախ	13:00. Տիէլ ինֆօ
13:05. Ամերիկեան ֆիլմաշար «Ֆէլքըն քրէսթ»	14:00. Արաբական յայտագիր
15:05. Լուրեր	15:30. Չէմփիլըզ Լիկ
17:00. Արաբական ֆիլմաշար	

ՆԻՈՒԹԻ ՎԻ.

7:30. Լուրեր	8:30. Դասական երաժշտութիւն
9:00. Սապահ էլ ուարտ	12:00. Մարդական յայտագիր
13:30. Տեղական ֆիլմաշար	14:00. Օնլի ճոքիկ
14:30. Լուրեր	15:30. Ստորիթ
16:30. Մարիամ Նուր	18:00. Ապու Սելիմ
19:00. Խաղեր	19:30. Լուրեր
20:15. Օնլի ճոքիկ	21:30. Պէլէ ռաքիպ
22:00. Լուրեր	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՐ

06:00. Առաջին ծրագիր	07:00. Հայուր
07:20. Առաջին ծրագիր	08:30. Փառաստուն «Արուստ 21րդ դար»
09:00. Հեռուստատեսիալ «Սիրոյ կախարհանք»	09:45. Կէս գիշերային ձեպրնթաց
10:40. Բարի ախորժակ	11:00. Հայուր
11:20. Ռուպիթնոս	12:00. Լուր
12:05. Երաժշտական այլիթ	13:00. Լուր
13:05. Top 10 (կարճ տարբերակ)	13:25. Աղունք (պզգային երգ)
13:45. Նորածնութիւն	13:55. Նորատեսեր
14:00. Լուր	14:05. Երաժշտական այլիթ
15:00. Հայուր	

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՈՒՆԱԿ

ԴԱՒԱԴՐԱԿԱՆ ՅԱՆՅԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՉ ԵՐԵՒԱՆ ԸՆՏՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱԲԻՉԱԿԱՆ ԲԱԶՄԱԾԻ ԳԱՂԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆԵՐ

Մալաթիոյ մէջ Աճմէտ Էմին Եւլմանի դէմ գործուած մահափորձէն ետք քաղաքին մէջ բացուած բնուրիւնը այսօր յանկարծ կար

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր -



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ Հ. Մ. Ը. Մ. - ՍԱԺԷՍ

Լիբանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանություն 4րդ հանգրուանի մրցումներում, այսօր երեկոյան ժամը 7:30ին Հ. Մ. Ը. Մ. թիմը «Ատոմ Ե. Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի աղջկանց խումբը կը հիերոնկալէ Սաժէս Պէյրուսը:

Հ. Մ. Ը. Մ., որ ցարդ իր կատարած երկու մրցումներուն առաջինին յաղթանակ արձանագրած է, իսկ երկրորդին պարտութիւն մը կրած, ոչ մէկ ճիգ պիտի խնայէ արձանագրելու համար եղանակի իր երկրորդ յաղթանակը, հոգ չէ թէ մրցակիցը Սաժէսն է:

● ԱՂԶԿԱՆՅԻ Բ. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, այսօր երեկոյան ժամը 20:00ին Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս Սաժէս Ժրտէյտէի դաշտին վրայ կը ձակատի Ֆրէր Պէյթ Մէրիի դէմ: Նշենք, թէ Հ. Մ. Ը. Մ. ցարդ իր կատարած երկու մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած է: Անիկա իր երրորդ մրցումը չկատարեց, որովհետեւ մրցակից իրենքը՝ Նորթ Հէյլըն քաշուեցաւ ախոյեանութեան:

● ՏՂՈՅ Բ. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական կազմը, վաղը՝ Հինգշաբթի, կը ձակատի Ռիատի Ֆէյթրուսի դէմ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԼԻԿԱՅԻ
ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱԾԱՐԸ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ 12 ԽՈՒՄԲԵՐ ԴՈՒՐՄ ՄՆԱՅԻՆ

Յրանսայի ֆուտբոլի Լիկայի բաժակի մրցաշարքին Ա. դասակարգի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անգլայ շաբաթավերջին, արձանագրուեցան բաժակի անակկայներ, նկատի ունենալով, որ Ա. դասակարգին մաս կազմող 12 խումբեր դուրս մնացին մրցաշարքէն:

Մեծագոյն պարտելները եղան՝ Փարիզ Մէյն Ժերմէն, Օքսէր, Նիս, Լանս Եւ շատ մը ուրիշներ:

Ստորեւ՝ Ա. դասակարգի մրցումներուն արդիւնքները (փակագիծին մէջ նշուած է անոնց որ դասակարգին մաս կազմելը):

Սոնաթ - Օքսէր	1-0
Փարիզ Մ. Ժ. - Նանթ	2-3
Ալեքս Էթիէն (Բ.) - Լը Զաւրը	1-0
Մոնպելիէ - Պորտո	1-2
Սոչո - Ամպուի	3-0
Կենկան - Սթրասպուրկ	1-0
Զրեթէյ (Բ.) - Նիս	1-0
Իպթը (Բ.) - Լիլ	1-2
Լը Սան (Բ.) - Կրեմոպլը (Բ.)	1-0
Մարթիկ (Գ.) - Մէս (Բ.)	0-1
Նիմ (Գ.) - Սըտան 1 - 1 (Նիմ փեճալթիներով՝ յաղթական, 4 - 2)	
Կեօնիոն (Բ.) - Ռէնն 1 - 1 (Կեօնիոն փեճալթիներով՝ յաղթական, 5 - 4)	
Պոլէ (Բ.) - Լանս 3 - 3 (Պոլէ փեճալթիներով՝ յաղթական, 3 - 1)	
Մարսէյ - Թրուա	5-1
Լիոն - Պասթիա	2-0

«ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»

ՊԱՐՍԵԼՈՆԱ - ՆԻԻՔԷՍԸԼ ՄՐՅՈՒՄԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱԻ

Եու. Է. Էֆ. Ա. Ի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ «ՉԷմփիլընկ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարքին Բ. հանգրուանին տեղի ունենալիք Պարսելոնա - Նիքեթըլ մրցումը, որ տեղի պիտի ունենար առաջինին դաշտին՝ «Նուրամփ»ի մէջ յետաձգուած է անորոշ թուականով մը, դաշտին մէջ կազմուած լճակներուն պատճառով: Նշենք, թէ երէկ ամբողջ օրուան տեղողութեան ընթացքին անձրեւը դադար չէր անած, ինչ որ պատճառ դարձած էր այդ լճակներուն կազմութեան:

Ա. խմբակէն ներս տեղի ունենալիք այս մրցումը իր ապահանջանէն մէկ ժամ առաջ միայն յայտարարուեցաւ որ յետաձգուած է, երբ Եու. Է. Էֆ. Ա. Ի պատասխանատուները, իրաւարարը, խումբին խմբապետներն ու մարզիչները իրարու հետ հանդիպում մը ունեցան:

Ըստ Եու. Է. Էֆ. Ա. Ի օրէնքներուն անիկա սկզբունքով տեղի պիտի է ունենայ այսօր:

Կազմակերպութեամբ
Ը. Յ. Գ. ԼԵՄԻ «Արարատ» կորիզին
«ARMENIA: GENOCIDE DENIED»
Ֆիլմի ցուցադրութիւն
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Դեկտեմբերին երեկոյեան ժամը 5:00ին, Ժպլէյի Ը. Յ. Գ. ակումբին մէջ:

Կազմակերպութեամբ
Ը. Յ. Գ. ԼԵՄԻ «Համազասպ» կորիզին
«ARMENIA: GENOCIDE DENIED»
Ֆիլմի ցուցադրութիւն
Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Դեկտեմբերին երեկոյեան ժամը 5:00ին, Չախլի Ը. Յ. Գ. ակումբին մէջ:

էՆ. ՊԻ. ԷՅ.

ՄԻԼՈՒՈՔԻ ՊԱՔԱ - ՔԼԻՎԼԵՏ ՔԱԲԱԼԻՐԶ՝ 140 - 133

էՆ. ՊԻ. Էյ. Ի երէկուան մրցումներուն, Սոլայնտեան գօտիի (Արեւելեան շրջան) 2րդ դիրքը գրաւող Պասթըն Սելթիքս արձանագրեց եղանակի իր 14րդ յաղթանակը յետ երկարաձգման ընթացքին 114-109 արդիւնքով պարտութեան մատնելով Օրլանտո Մեյնը: Յաղթական կազմին մարզիկներէն Փոյ Փիլս նշանակեց 30 կէտ, իսկ անոր խմբակից Միքուան Ուոքըր՝ 28 կէտ:

Միլուոքի Պաքս դժուարութեամբ պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Քլիվլենտ Քալիֆորնը՝ 140-133 արդիւնքով: Անիկա իր յաղթանակը արձանագրեց երկրորդ երկարաձգման ընթացքին միայն, հակառակ անոր, որ Ռիքի Տէյլիս նշանակեց 45 կէտ, իսկ Ջիտրուանս Իլկոնքաս՝ 20 կէտ Եւ 11 ռիպուլտ: սակայն անոնց կազմը Քալիֆորնի կրեց եղանակի իր 19րդ պարտութիւնը: Յաղթական կազմին մարզիկներէն Սէմ Բէտրլ նշանակեց 39 կէտ:

Լոս Անճելըս Բլիֆորն պարտութեան մատնեց Նիւ Օրլինսը: Անոր արձանագրած այդ յաղթանակը նկատուեցաւ կարեւոր, որովհետեւ Օրլինս այս եղանակին առաջին անգամ ըլլալով իր դաշտին վրայ պարտութիւն կը կրէր: Քլիֆորնի մարզիկ Էյթթըն Պրէնտ նշանակեց 29 կէտ Եւ 12 ռիպուլտ: Նշենք, թէ Պրէնտ չորրորդ քորթըրին իր նշանակած 15 կէտին ինք նշանակեց մրցումին վերջին 40 երկվայրկեանին:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:
Պասթըն Սելթիքս - Օրլանտո Մեյնը 114-109
Նիւ ձըրպի Նէթց - Ֆէօնիքս Սանս 106-93

Միլուոքի Պաքս - Քլիվլենտ Քալիֆորն 140-133

Լոս Անճելըս Բլիֆորն - Նիւ Օրլինս 94-90

Միլուոքի Վուլվը - Տենսլըր Նակթեց 92-84

● ԵՈՒԹԱ ՃԷԶԻ մարզիկ Կրէյ Օսթերթալ երէկ Միքսեյթ Նահանգներու պատերազմի ֆետերասիոնին կողմէ 7500 տուրքով ենթարկուեցաւ: Նկատի ունենալով, որ ան բողոքեց Եւ իրաւարարին տուած որոշումին չենթարկուեցաւ, երբ դաշտէն անմիջապէս դուրս չելաւ ան ստացաւ այդ պատիժը: Բարեբախտաբար սակայն ան իրաւարարին մօտենալով ոչինչ կատարեց, այլապէս ան տարբեր պատիժ մը կրնար ստանալ:

Սիեթլ Սուփըրսոնցիքսի մարզիկ Ռէ-

Ստորեւ՝ դասաւորումը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

● (Ատլանտեան գօտի)

	ՅԱԳԹ.	ՊՍՐՏ.
Ֆիլատելֆիա Սիքսըրզ	15	6
Պասթըն Սելթիքս	14	6
Նիւ ձըրպի Նէթց	14	7
Օրլանտո Մեյնը	12	10
Ուաշինգթըն Ուիզըրթ	9	11
Նիւ Եորք Նիքս	5	13
Մայեմի Հիթ	5	15
(Կեդրոնական գօտի)		
Ինտիանա Փէյլըրզ	15	5
Նիւ Օրլինզ	15	7
Տիքսոնիթ Փիլսթընզ	12	7
Աթլանթա Չոքս	10	10
Միլուոքի Պաքս	9	11
Թորոնթօ Ռեյժըրզ	7	13
Շիքալօ Պուլզ	5	15
Էլիվլէնտ Զալիֆորն	3	19

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

● (Միջարեւմտեան գօտի)

Տալաս Մալթրիքս	18	2
Հիւսթըն Ռեյթթց	11	8
Սան Անթոնիօ Սփըրզ	12	9
Եուրօ Ճէզ	12	9
Միքսեթա Վուլվը	12	10
Տենսլըր Նակթեց	6	15
Սեմֆիս Կրիզիզ	3	18
(Խաղաղական գօտի)		
Սաքրամենթօ Էլիզ	18	5
Սիեթլ Սուփըրսոնցիքս	11	9
Ֆէօնիքս Սանզ	10	10
Փորթլէնտ Թրէյլ Պլէյթըրզ	9	9
Լոս Անճելըս Էլիվլըրզ	9	12
Լոս Անճելըս Էլէյթըրզ	9	13
Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ	7	13

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ «ԱԻԱԶԱԿՈՒԹԻՒՆ» ԿԱՏԱՐԵՑ...

Շարունակուած Ա. էջԵԸ

Եգիպտոս բազմիցս յայտարարած է, թէ կը մերժէ Իրաքի դէմ պիւնտրական գործողութիւն մը:

Միւս կողմէ, Իրաք երէկ խիստ ռճով յարձակում գործեց Միացեալ Նահանգներուն վրայ՝ դիտել տալով, որ ՄԱԿի պատմութեան մէջ անսխալութեամբ «կոռուպտ» մը տեղի ունեցած է, երբ Ուաշինգթըն տիրացած է Կէնթըրու մասին պատրաստուած թղթաբարիս օրինակին: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի մնայուն անդամ Էնթոնի Էրկինը երբ արտօնութիւն ստացած են ունենալու թղթաբարիս օրինակներ, որ պէտք իրենց կարգին ուսումնասիրելու պայման: Արաբական աշխարհի մէջ էւս, ամերիկեան արարքը «աւապակութեան» որակողներ իրան՝ նկատի ունենալով, որ Ուաշինգթըն թղթաբարիս տիրացած է մնացեալ անդամներուն արտօնութիւն

արուելէ առաջ: Բրիտանացի Եւ ֆրանսացի դիւանագետներ ըսին, որ Իրաքի պատրաստած թղթաբարիս օրինակները ստացան Ուաշինգթընի մէջ, երկուշաբթի երեկոյեան: Ամերիկացիները օրինակ մը ձեռք ձգած էին անկէ 18 ժամ առաջ: Ամերիկացի Եւ ֆրանսացի դիւանագետներ արձանագրուած ուշացումը արդարացունքին՝ դիտել տալով, որ օրինակներու պատրաստութիւնը տեղի ունեցած է գաղտնապահութեամբ, որպէսզի թղթաբարիս տեղեկութիւնները ապօրինի կերպով չհրապարակուին: Միւս էւ երէկ յստակ չէր տակաւին, եթէ Ռուսիա Եւ Չինաստան ալ ստացան իրենց օրինակները: Ապահովութեան խորհուրդի ոչ մնայուն տարր անդամները համաձայն թղթաբարիսը պիտի ստանան: Ամերիկացի պաշտօն-

նատարներ իրաքեան թղթաբարիս Նիւ Եորք ժամանումէն երեք ժամ ետք արդէն օրինակ մը սեփականացուցած էին: Արաքին դէմ առարկողները կ'ըսեն, որ Ուաշինգթըն «աւապակութիւն» կատարած է խախտելով ՄԱԿի բոլոր որոշումները: ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան պաշտպանեց Ուաշինգթընի կէցաւածքը, դիտել տալով սակայն որ օրինակին Ուաշինգթըն հասնելէ ետք, լուր ունեցած է: Միւս յայդ, Իրաքի մէջ, ԱՄՍՈՎԻՔԻ քննիչները երէկ շարունակեցին քննութիւնները: Անոնք երէկ այցելեցին Էնթոնի Էրկինին, որ Ենթադրաբար հաւաքական քանդումի կէսերը կը պատրաստուին: Ապահովութեան խորհուրդի անդամ Ռուսիա երէկ դատապարտեց «արտաքին ճշմունքները» որոնց կ'ենթարկուին Իրաքի

ՇԱՐԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Հ. Մ. Ը. Մ. ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած ֆուտբոլի մրցաշարքը, որ տեղի պիտի ունենայ այս շաբաթավերջին, պիտի ըլլայ ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած Գ. հանգրուանը, ճատրակի Եւ քրոս քառնթրիի մրցումներէն ետք:

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը.

ՇԱՐԱԹ, 14 ԳԵԿՏԵՄԲԵՐ	ԺԱՄ
ՄԵՐՆԱԿԵԱՆ - Սոֆիա Յակոբեան	2:30
ԴԿՐԵՎԱՆՔ - Շապիեան-Թաթիկեան	4:00

ԿԻՐԱԿԻ, 15 ԳԵԿՏԵՄԲԵՐ
ՃԵՄԱՐԱՆ - Յովակիմեան 9:30
ՆՇՆԵՔ, թէ այս մրցումները, որոնք տեղի պիտի ունենան Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին դիմաց գտնուող Խուրի Արիս դաշտին վրայ, պիտի սկսին ճշդուած ժամուն: Իրաքանչիւր կիսախաղի տեւողութիւնը պիտի ըլլայ 30 վայրկեան:

ՌԱԻԱՆԵԼԼԻ ՀԱՄԱԶԱՅՆ՝ ԻՐ ԱՄՍԱԿԱՆԻՆ ԿՐՃԱՏՄԱՆ

Իտալացի յառաջապահ Ֆապրիցիօ Ռաւանելլի, որ մաս կը կազմէ անգլիական Ա. դասակարգի Տերպի խումբին, համաձայն գտնուեցաւ, որ իր ամսականին 25 առ հարիւր վեղջուի, ակումբին պարտքերը մեղմացնելու համար՝ նկատի ունենալով, որ Տերպի հսկայական բացի մէջ է:

Ռաւանելլի, որ այս եղանակին միայն չորս մրցումի դաշտ ներկայացաւ, շաբաթական իր ակումբէն կը գանձէ 63 հազար տոլար: Ան այժմ կը գտնուի Հռոմ, ուր իր կատարած վիրաբուժութեան ետք ապաքինման ընթացքի մէջ է: Կ'ակնկալուի, որ ան Յունուարի կիսուն վերադառնայ կանաչ դաշտերը:

ԹՈՒՐԸ ԿԻՊՐԱՅԻՆԵՐԸ...

Շարունակուած Ա. էջԵԸ

րը՝ ինչ կը վերաբերի մեր կարգավիճակին, գերիշխանութեան Եւ հաւասարութեան, կը շարունակուին, ըսած է ան՝ հեռաձայնով խօսք մը ուղղելով շուրջ 10 հազար ցուցարարներու, որոնք Նիկոսիոյ թրքական բաժնին մէջ ծրագրին դէմ կը բողոքէին:

Ան կը խօսէր ՄԱԿի ներկայացուցիչ Ալվարօ տէ Սոթոյի կողմէ Նոյեմբեր 11ին հրապարակուած վերամիացման ծրագրին բարեփոխուած մէկ տարբերակը ստանալէ ետք: Ան նոյն տարբերակը յանձնած է նաեւ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Քլէրիտեպի:

Թուրք կիպրացիները առարկութիւններ կատարած են առաջարկուած գերիշխանութեան Եւ հողային կարգադրութիւններուն, ինչպէս նաեւ հազարաւոր յոյն կիպրացիներու հիւսիսային թուրք կիպրական բաժնի վերադառնալու առաջարկներուն դէմ:

(ԱՅՓ)

մէջ ՄԱԿի քննիչները: Արտաքին գործոց նախարար Իկր Իվանով ըսաւ, որ քննիչներուն բանաձեւելիք երաշխացութիւն է միայն որ պիտի քննարկուի Ապահովութեան խորհուրդին մէջ Եւ անոր լոյսին տակ պիտի ճշդուին որդեգրուելիք քայլերը: Իվանով, որ կը խօսէր Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Ռուսայի հետ տեսակցութեան մը ատարին, ըսաւ որ Իրաք յարգած է Ապահովութեան խորհուրդին որոշումը Եւ ճշդուած պայմանաձեւէն մէկ օր առաջ յանձնած է Կէնթըրու ծրագրին գծով պատրաստուած թղթաբարիս: Իվանով ըսաւ նաեւ, որ թէեւ Ապահովութեան խորհուրդը համաձայնած է թղթաբարիս օրինակներ յանձնելու, բայց Եւստիպիտայի որոշումները խախտելու յանցանքով:

ՄԻՍՅԵԱԼ ՆԱ-ՀԱԳՆԵՐՈՒ ՆԱԿԻՆ ՆԱԽԱԳԱԽ ՃԻՄԻ ՔԱՐՔԵՐ ՆՊԱՅԻՆ ԽԱՊԱԿԱԿԸ ԱՍՏԱՆԱԿԸ ՍՏԱՆԱՅԻՆՈՒ ԱՊԻԹՈՎ արտասանած իր ճանաչումը մէջ քննադատեց Իրաքի հանդէպ Ուաշինգթընի որդեգրած քաղաքականութիւնը: Քարթըր զգուշացուց պատերազմէ մը, որ աղէտալի արդիւնք պիտի ունենայ: ՔՈՒԷՅՈՒ դատապարտեց Իրաքի նախագահ Սաւտան Հիւսէյնը՝ պայն ամբաստանելով ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի որոշումները խախտելու յանցանքով: (ԱՅՓ)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ

ՄՈՍԿՈՒԱ, 10 (ԱՖՖ).- Միջազգային ահաբեկչությունը եւ անջատողական կազմակերպությունները վտանգ կր սպառնան Կեդրոնական Ասիայի ապահովության, յատկապես խորհրդարանի, յայտնած է Ռուսիայի Ապահովության նախարարի պատասխանատու Վլատիմիր Ռուչայնո Երեքշաբթի օր, նախկին խորհրդարանի 6 հանրապետություններում խորհրդարանի մայրաքաղաք Պիշքեթի մէջ կայացուցած խորհրդածողովի մը ընթացքին:

«Պէտք է աւելի զգուշ ըլլանք՝ կանխարգիլելու համար ծիտական դէպքեր, ինչպէս ահաբեկչական արարքներ: Ապահովության մարզի գործակալութիւններ միշտ ալ կարող չեն պանոնք կանխարգիլելու: Ասիկա ո՛չ միայն Ռուսիան կը մտահոգէ այլ նաեւ Ա. Պ. Հասարակապետութիւնը», յայտնած է ան:

Ռուչայնո կը նախագահէր Հայաստանի, Պիշքեթի, Ղազախստանի, խորհրդարանի, Ռուսիայի և Մաճիկիստանի ապահովության խորհուրդի պատասխանատուներու խորհրդարանում:

6 երկիրները կը կազմեն Ապահովության Հասարակապետության շրջանակները:

Այնպէս ինչպէս խորհրդարանի հետ Ռուսիայի ապահովության մարզին մէջ գործակալութեան համաձայնութեան Ռուչայնո յայտնեց, թէ Մոսկուա համոզուած է, որ համաձայնութիւնը «այլ երկիրներում դէմ չէ ուղղուած, եւ թէ ահիկա կ'ամրապնդէ Ռուսիայի և խորհրդարանի ապահովության մարզին, ինչպէս նաեւ Ա. Հ. Համաձայնագիրը կ'ընթացէր երկիրներում ապահովության մարզին եւ ԱՊՀ-ի բոլոր երկիրներում ապահովութիւնը»:

Խորհրդարանի նախագահ Ասքար Աբաեւ յայտնած է, թէ համաձայնագիրը կ'ընթացէր երկիրները ռազմական օդանայնակ ստացած են՝ արագ հակադարձութեան համաքակաւ ուժի մը համար, որուն կեդրոնը Պիշքեթ պիտի ըլլայ:

ՉԵՉԵՆԻԱ Ի ՎԻՃԱԿԻ ՉԷ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸԱԶԱՐԱԿՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 10 (ԱՖՖ).- Միջազգային կարմիր խաչը Երեքշաբթի օր զգուշացուցած է, թէ Չեչենիա տակաւին պատրաստ չէ ընդունելու հապարտոր գաղթականներ, որոնց Ռուսիա կը ստիպէ, որ հեռանան ինկուզեթիոյ մէջ իրենց գաղթականներէն:

Եւրոպայի եւ Ամերիկայի Մ. Կ. Խաչին ընդհանուր պատուիրակ Պէթարիս Մեկեւան Ռոկկո, յայտնած է, թէ ամբողջովին վստահ չէ, թէ նիթական եւ ապահովութեան պայմանները յարմար են գաղթականներու վերադարձին համար:

Մոսկուայի ինկուզեթիոյ մէջ գաղթականներ փակելու որոշումը մեծ մտահոգութիւն պատճառած է մարդկային իրաւանց խմբակներու, որոնք բողոքած են այդ քայլին դէմ:

Անցեալ շաբաթ, անիկա փակած է Չեչենիա - ինկուզեթիա սահմանին վրայ Աքի Եւրոպայի կողմէր գաղթականներ, որ առաջինն է շաբաթը մը գաղթականներէն:

Ինկուզեթիոյ մէջ եւ շրջակայքը ապրող չեչենիներուն թիւը շուրջ 20 հազարով կը գնահատուի, մինչ 1999էն ի վեր, երբ Ռուսիա 10 տարուան ընթացքին երկրորդ անգամ ըլլալով ուժեղ զրկած էր Չեչենիա, հանրապետութեան խոյս տուած գաղթականներուն թիւը շուրջ 110 հազար է:

Ռուսիա հերքած է, թէ կը պարտադրէ գաղթականներուն իրենց աւերուած հանրապետութիւնը վերադարձնելու:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ ՊԵՏՔ Ե ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԿԱՏԱՌԵԼԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱՆ

ՄՈՍԿՈՒԱ, 10 (ԱՖՖ).- Ռուսիայի պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով եւ Մ. Նահանգներու սպայակոյտի պետ Ռիչըրտ Մայրըզ Երեքշաբթի օր կոչ ուղղած են, որ իրենց երկու երկիրները պիտուորական շօշափելի գործակցութիւն մը մշակեն:

«Մեր պաշտպանութեան նախարարութիւններուն միջեւ յարաբերութիւնները պէտք է որակաւոր նոր մակարդակի բարձրանան», ըսած է Իվանով:

Ան երկու երկիրներուն միջեւ թափ ստացող պիտուորական սերտ յարաբերութիւններուն մասին գովասանքով արտայայտուած է՝ ըսելով, թէ «անոնք աւելի եւս կարելոր են ի տես նոր սպառնալիքներու եւ մարտահրաւերներու», ինչպէս ահաբեկչութիւն եւ ԱՖղանիստանի մէջ կացութիւնը:

Մայրըզ նոյնպէս աւելի սերտ կապերու կոչ ուղղած է ժողովին ընթացքին, որուն ներկայ եղած է նաեւ Ռուսիայի սպայակոյտի պետ Կորալար Անթոյի Բվաշին:

Երկու երկիրները սերտ դաշնակիցներ դարձած են Սեպտեմբեր 2001ի հակամարտութեան յարձակումներէն ի վեր եւ անոնց յաջորդող ահաբեկչութեան դէմ պատերազմի հռչակումէն ետք, սակայն Ռուսիա կ'ընդդիմանայ Իրաքի դէմ պիտուորական գործողութիւններու դիմելու աներկեան սպառնալիքներուն:

նեւորուն մասին գովասանքով արտայայտուած է՝ ըսելով, թէ «անոնք աւելի եւս կարելոր են ի տես նոր սպառնալիքներու եւ մարտահրաւերներու», ինչպէս ահաբեկչութիւն եւ ԱՖղանիստանի մէջ կացութիւնը:

Մայրըզ նոյնպէս աւելի սերտ կապերու կոչ ուղղած է ժողովին ընթացքին, որուն ներկայ եղած է նաեւ Ռուսիայի սպայակոյտի պետ Կորալար Անթոյի Բվաշին:

Երկու երկիրները սերտ դաշնակիցներ դարձած են Սեպտեմբեր 2001ի հակամարտութեան յարձակումներէն ի վեր եւ անոնց յաջորդող ահաբեկչութեան դէմ պատերազմի հռչակումէն ետք, սակայն Ռուսիա կ'ընդդիմանայ Իրաքի դէմ պիտուորական գործողութիւններու դիմելու աներկեան սպառնալիքներուն:

ԿԱՂԱՆԳԸ ԴԻՄԱԿՈՐԵԼ ԸՆՁԱՍՏԱՆԵԱՆ ԳԻՆՈՎ

Նուիրելու համար բարեկամներու եւ յաճախորդներու

- 1- ՆԱՅԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարուայ նուիրելու ծրարումով:
- 2- VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անուսով գինի նաեւ փայտ ստեմբով:
- 3- Գոնեաք գանգալ անուսմատեակով:
- 4- Գինի KHORAN 3 լիթր նուիրելու տուսով:
- 5- Գոնեաք Souvenir ԱՂԹԱՍԱՐ 10տարուայ:

VAK Trading Հաստ. Հեռ.: 03/626177 - 03/773609
Եւ UNIVERSE վաճառատուն, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք

EURO STYLE

Salon for Men European Specialists

Առաջին անգամ ըլլալով
Լիբանանի մէջ

Haircut	12,000 LL
Haircut for kids	8,000 LL
Hairwash+Brushing	5,000 LL
Highlighting	25,000-30,000 LL
Hair Coloring	25,000 LL
Head Massage	8,000 LL
Bain d'huile	5,000-8,000 LL
Permanent Curles	25,000-30,000 LL

Christmas offer
until January 10 - 2003
50% discount

Հայկայի կրպարակ,
Բաղաբաղիտարակի դիմաց,
BREEZEVALE HOUSE
Mediterranee դրամատան կից, Ա. յարկ,
հեռ.: 01 / 892081

ՓԵՆՈՒՍ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հաւելորոյ
Պարահանդէս

Կիրակի, 5 Յունուար 2003
Երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ
PHOENICIA դանդոկին մէջ

Երգահանդէս
Երկուուարի, 6 Յունուար 2003,
Երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ,
UNESCO-ի սրահին մէջ

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelix գրպանուր, Անթիլիաս Արքայեան մարզադպրոցային կեդրոն, Արզիկ - Համազգայինի գրպանուր, Շաղոյեան կեդրոն, Պուրճ Համուտ - Տիւրքի Գեկա, Պուրճ Համուտ - Սփուտի Վաչէ, Երկաթ կանոնիքի մօտ, Հաճըն - Համազգայինի «Կոմիտաս» գրպանուր, Չորաք Ել Պլաթ - Համազգայինի Լեւոն Շանք Կեդրոն, Պուրճ Համուտ